



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՄԱՐԳԱՐ

# ՀԱԼԱԾԱՆՔԻ

## ԹԵՌԻՆԴԼ

Հեղթուած

(ԹԱ. ԹԵՐ. ԱՐԳԵՐԱՑ)

Ա.

...Լոյսը տենչանք է ծնում մեր հոգում,  
Տենչը հալածանք մեզ համար ունի.  
Եւ հալածանքը մայր է բաղմածին  
Վեհ հոգիների:

(Եթ. 63)

891. 99

Վ-35

ԱԼԻՔՍՈՒԳԻՐԱԳՈԼ  
Աղաբան Դէորդ Ա. Սանոյեանցի

1905

891.99  
· V-35  
119

14 FEB 2011

1233  
b331

U U R + U R

891.93 *Chrysanthemum*  
S-35 *Lengnau et al.*  
87m 875

20 22/3 68

**БЕРЕГИТЕ КНИГУ!**

она служит не одному, а многим

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

# ՀԱԼԱԾԱՆՔԻ

## ԾՆՈՒՆԴԸ

RUPERTWOLD

፳፻፲፭ ቤርሃን

6

Цефальгидол  
Гипнозерпин  
Комбинированная  
Фармакозадача  
№ 1  
Ленинград  
1936 г.

Ա Հ Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ո Ւ  
Տաղարան Գէորգ Ս. Սանոյեանցի  
1905

(Եթ. 37):

(b*P.* 37):

4248.0

25 JUN 2013 132344

Дозволено Цензурою 15 Июля 1905 г. г. Тифлисъ.



3209  
40

*B* *b* *B* *b* *B* *b* *B* *b*.

*Ես բեռնաւոր եմ...*

Մեծ ուղիների տիտան հասակը ահա չափելով, քրտնաթոր, հիւծուած, աղեկէզ ճակտով, ոտքերս մաշուած, ծնկներս դողդոցուն, թախծալից դէմքով, մուայլ ու անհուն ճակատագրի բեռան տակ ճնշուած, իս քուն եմ մտնում...։ Ահա սև մահուան կարճակեաց քոյը զիշկը բաց արած, թոյլ բազուկներով տառապած մարմինս ու բռնաբարուած խղճուկ ուղեղս մեղմիկ շոյում է։

Հանգիստ է քունս. օրուայ ահոելի տանջանքներից յետ մի քուն, անուշ նինջ – անվերջ ու անծայր՝ միակ փափազս է։ Եւ խերճ մարմնիս հէզ անդամները կեանքի սոսկալիք բեռնից տառապած, ահա մի վայրկեան ազատ զունչ տղան։ Ու ես քնում եմ երկար ու անվերջ իրան սահմանը մահուանը կցող մի անուշ քնով… Երկար կը լինի, ես այս չգիտեմ, բայց փափազս այդ է։

Բայց ահա յանկասթ թմրած ուղեղս պինդ կապահքներից յուշիկ բարախով ոտքի է կանգնում. և

միտքս նիրհուն քնոյ սև քօղը պատռելով փութով,  
ուժգին բաղխում է ուղեղիս դուռը և նորա անվերջ  
քունը խանգարած ոտքի է հանում դիտելու համար  
նոր եկտորների աշխոյժ, յաղթական չքնաղ խմբերթը:  
Օ՛հ, սիրուն հիւրեր... անցած օրերիս չքնաղ  
պատկերներ...:

Վաղուց մոռացման դադաղում պառկած իղձերս  
են դոքա: Ահա, հմայիչ շղարշներեսին, յախուն հրա-  
մով մտքիս առաջից հապճապ ընթացքով առաջ են  
վազում: Եւ քնած հոգիս նրանց գեղանի տեսքից ըզ-  
մայլած, ահա քրտնաթոր, աչքերը յառած նոցա ե-  
րամին հետապնդում է: Եւ թեսեր առած՝ իւր հանգըս-  
տաբեր քունը մոռնալով նոցա յետեից հեքով թոշում  
է: Ու նոցա ճակտին կարօտի համբոյը և հրամեշտի  
ողջոյն կնքելով՝ կրծքիս վանդակում հազիւ բարախող  
խեղճ բանտարկեալին հիւր է ուղարկում:

Հքնաղ պատկերներ անցեալ օրերի. թմրած ու-  
ղեղս, քնամած միտքս, նիրհով պարփակուած տառա-  
պած հոգիս և հառաչաբեկ, ճմրուած սիրտս ոտքի  
հանեցիք...: Ես ձեզ եմ դիմում: Ճանթուած ուղեղիս  
դուք սփոփիշներ. տառապած հոգուս դուք էք եր-  
գասու:

### Մ Ո Ւ Ս Ա Ն Ե Բ.

Ո՞վ էք, ո՞վ չքնաղ ու վեհ տեսիլներ.  
Ո՞վ էք իմ սրտիս թանկագին հիւրեր...:  
Ահա իմ նիրհուն հոգուս առաջով

Գունատ ու դժգոյն պատկեր է անդնում:  
Ո՞վ ես, ուրուական,  
Որքան անծանօթ, այնքան կախարդիչ,  
Որ հոգիս այդպէս ալեկոծում ես:  
Ո՞վ քեզ շնորհեց այդ իրաւունքը,  
Որ սրտիս ծալքերն հետամուտ թափով  
Դու խուզարկում ես:  
Հոգիս քնած է, ու քնի կարօտ.  
Ինչու բաղխում ես այդպէս տարօրէն  
նորա դոները:

Թող, մի վրդովիր դու նորա նինջը:  
Ա՞ա, չքնաղ տեսիլ, դու ինձ ծանօթ ես: Ու հո-  
գիս հազիւ ահա սթափուած քեզ ճանաշում է: Նորա  
հայելին՝ դու իմ ընկերն ես: Ընկեր վաղեմի. օ՛հ,  
գանզս ցնցող, իմ խեղճ ուղեղում պայքար ծնեցիր:  
Ահա պատկերդ բարախուն սիրտս ալեկոծ ծովի գոռ  
ալիքների հուժկու պայքարի ասպարէղ դարձեց:

Ու սիրտս մեռած, սիրտս անզգայ ահա կատա-  
ղի երկունքով բռնուեց. ու նորա ամուլ, չորցած  
արգանդից մի չնաշխարհիկ էակ գոյացաւ:

Էակ է անաչք, բայց սրատես է. ու տիեզերքի  
խորշերն է դիտում: Զուրկ է ականջից, բայց նորա  
երզի շեշտին ունկնդիր՝ մեղմ հնչիւններից անվերջ  
յուզում է: Ու շօշափում է առանց ձեռքերի անհուն  
էցերը մաքուր եթերի: Նա լեզու չունի. ու առանց  
լեզուք նա դայլայլում է անուշ մեղեղի: Նա միշտ  
պատմում է զաղտնիքն աստղերի ու փառքը երկնի.  
և հասկանում է որոտի ձայնը ու թարգման զառնում  
սրտի թրթռոցին անվերջ տառապող մեղկ հոգիների,

Ո՞վ ես, խուզարկու դու ամեն սրտի,  
Ո՞վ ես, գաղտնագէտ դու տիհղերքի,  
Որ ծնունդ առար սրտիս արգանդում....  
Ընկերիս հոգուց սրտիս մէջ յանդած  
Դու անմահական սէրն ես վեհապանձ....

Սէր... բայց դու մենակ չես. ուղեկիցդ ով է քօ-  
ղապատ դէմքով: Եհա ալեռը, ահա զառամիտալ՝ զան-  
դաղ քայլերով առաջ է դալիս: Ջատ օր է տհաել,  
ահա սպիտակ ճերմակ գլուխը վկայ է դորան: Ահա  
ճակատի ակոսները խոր ինձ յիշեցնում են հրաբուղի-  
ների ահեղ հարուածից կուրծքը պատ՛ռած ծեր եր-  
կրագնդի ձորերն անյատակ: Ինչեր չեն տիսել նորա  
աշքերը, դորան ապացոյց ահա թախծալից, խղճալի  
տեսքը: Իբրև թեազուրկ, կեանքիցը յոզնած նոքա  
թուուններ յենուած են ցամաք ժայռի խորշերին. ու  
դողդողում են մահուան երկիւղից՝ նոցա դէմ կանգ-  
նած, նոքա սոսկում են աննշան հողմից, որ ապի-  
կար չէ իւր թոյլ շարժումով նոցա գլորել խոր ան-  
դունդները: Ընկերդ յոզնած է, պատմիր ինձ դու սէր:  
Դանդաղ քայլերը մանրիկ, աննշան նորա կրծքիցը  
հեր են դուրս քաշում: Հեռուից է դալիս, փայտը  
մաշուած է, ողնաշարը կոր: ով է, ինձ ասա, ընկերը  
քո նոր:

Վիշտն է դա և քեզ մշտական ընկեր. որտեղից  
դտաք գուք այդպէս իրար: Հոգիս դրան էլ, չգիտեմ  
ինչո՞ւ տենշում է լինել այսօր հիւրենկալ: Ու դուք  
անբաժան ընկերներ էք միշտ սկսած այն օրից, երբ  
թշուառ սիրու առաջին անգամ աշխարհիս վերայ

սկսեց բաբախել:

Ընկեր, պատկերդ հմայիշ իմ սրտի խորքում սի-  
րոյն կեանք տուեց ու գորովալից նորան գուրգուրեց:  
Մէրը իմ սրտում թախիծն ու վիշտը, դարձրեց ընկերը.  
Նորա անբաժան ծնունդն են հոգուդ գեղանի դէմքի:

Քեզ՝ սիրոյ ծնող, սիրոյդ՝ վշտի մայր, վշտին՝  
ինձ դայեակ—ահա ձօնումնեմ ձիր արգասիքը...: Դուք  
էք իմ մուսամ:

Վաղանցուկ կեանքիս դարումը մթնեց  
Ու ձաղիկներս պէս-պէս, գեղանի  
Անվերջ ձահակի առարկայ դարձան...

Այրող արեի:

Կեանքի խորշակը յախուռն, անողոք,  
Գարնան վարդերիս շիրիմ պատրաստեց,  
Ու մողացութեան յաղթական կոթող  
նոցա շորացած աճիւնին դրեց:

Ենյագ տենչանքս անմեղ մանկութեան  
Ու հոգիս կը ծող խելառ թռիչքը.

Պատանեկութեան.

Իրանց յաղթական թափից գրկուեցան:  
Իսկ ապագայի հեռու խաւարում  
Անկայուն կեանքի ողբը բերանին,  
Ահա հանգչում է մոլորուած հոգուս.

Փարոսը վերջին—

Մի գարուն կեանքի յոյս նոր գարնան:


Ու հոգիս գրկուած աշխարհիկ կեանքի  
Վերջին խարիսխից,  
Տարութերւում է անծիր երկնքի  
Աննիւթ էջերում:

Եւ թոյլ թևելով մահուան դէմ զինուած  
Խաւար շիրիմի ճամբան է փնտռում,  
Իրան դէնքերը  
Լետայի սառն յատակին ուխտած.

Ու մի վայրկեան էլ և նա կորած է,  
Բայց գորովագութ դուք զինակիցներ,  
Նորան շտապով օդնութեան հասաք.  
Նա ոյժ է առնում ահա ձեր տեսքից:  
Ահա զինաթափ՝ նոր զէնքեր դտած,  
Նորից տենչում է յաղթական դուրս գալ  
Ենդուլ պայքարից մահուան դէմ մղած....:

Ընկեր, սէր ու վիշտ,  
Զեր դաշնակցութեան աննկուն թափը  
Հոգուս մէջ ոգի, նոր ոյժ սերմանեց.  
Զեր պատկերները չորցած վարդերիս  
Նորից փթթելուն  
Եղան ազդարար.

Ու տիեզերի թաձր խաւարում  
Հոգոյս փարոսը լոյսով զինեցին:  
Զեր հետքով ահա սթափուած հոգիս  
Յոխորդ տենչերով առաջ է վազում,  
Սուրբ ազատութեան կեանքի բարիքից  
Առաջին անգամ բաժին առնելու.  
Դուք էք իմ մուսան....



## ՀԱԼԱԾԱՆՔԻ ԾՆՈՒՆԴԸ

Ա.

Ա Ն Ա Պ Ա Տ Հ .



ապուտակ երկինք ու զինջ անապատ  
Ընհուն դարերի շարքերն համբելով,  
Միմեանց հայեացքից կարծես սարսափած  
Իրար են նայում անքուն աչքերով:

Որպէս վշտաբեկ նորա սիրահար,  
Մեծ տիեզերքի թախծութեան նետը  
Սրտներում թաղուած,

Անձայն մքմունջով լուռ հառաշում են:  
Նայում են իրար ու միշտ թախանձում:  
Ենապատը չոր՝ արեից խանձուած,  
Իրան այլանդակ հոգեարք կուրծքը

Լայնարձակ փոած,  
Աչքը դէպի վեր-երկնքին յառած,  
Անձայն աղերսի ահոելի հեքով

Փոթորիկ, կայծակ, անձրև է խնդրում:  
    Կապոյտ երկինքը  
Դարաւոր վշտից ցամքած աշքերը  
    Դէպի ցած թողած,  
Մերկ անապատին աղերս է կարդում՝  
Կուրծքը զարդարել դալար կանաչով:  
    Երկինքը կարօտ կանաչ պարտիզի,  
ԾԱ ամպն է փափագ հէգ անապատի:  
Երկինքը ծաղկի, դաշտը հեղեղի  
    Տենչով տոշորուած,  
Երկուսն էլ անգութ, երկուսն էլ ամուլ՝  
Ենքերջ դարերի դանդաղ ընթացքը  
Դիտելով անփոյթ, ապուշ հայեացքով  
    Անձայն տնքում են:  
Յօղաբեր, կայտառ հողմն է բացակայ...

Հեծեծան սիրտը ու միտքը վսեմ սըընթաց կեանքի բիւր ու բազմերանգ ելեէջները անքուն դիտելով միմեանցից հեռու, չար բախտի վճռովի իրարից զատւած, անվերջ կրչերով մէկը միւսի նինջն է խանգարում ու քունը յուզում:

Նայում են իրար թախծալից դէմքով, միմեանց աղերտում: Վեհապանծ միտքը տաղտուկ ու անկեանք՝ սրտի թրթռին է յաւէտ սիրահար: Սիրտը վշտաբեկ անզեկ մի նաւակ՝ հայեացքը յառած մտքի ճակատին ուղի է խնդրում ոտքի ելնելու:

Դարեր դարերին ջերմհամեշտի համբոյրներ տալով նոցա կոխն են շարունակ ծաղրում: Վեհ միտքը

սրտի, խեղճ սիրտը մտքի անվերջ փափազով շիրիմ են մտնում: Հոգին է պակաս:

Բժամիտ ամբոխն ու ծեր հանճարը իրենց գոյութեան առաջին օրից երջանիկ կեանքի ուղին փընտուլով լուռ հառաչում են: Հանճարն ամբոխից, ամբոխն հանճարից խղճալի դէմքով գութ են աղերսում:

Մոլի ամբոխը երջանիկ կեանքի ուղին կորցրած, նորա անհամբոյը ժայռերի դիմաց գլխակոր, մոլոր, սրտակէզ ճիշով վեհ ճշմարտութեան լապտեր է խընդրում ծեր գիտնականից:

Սեպ-սեպ ժայռերի յետենում կանգնած ամբոխի հանդէպ ծեր դիտնականը-անմահ գիտութեան արեը ձեռին, մոլար ամբոխին հուժկու շեշտերով կոչ է առաքում:

Երկուսն էլ ամուլ, երկուսն էլ անգութ, անթիւ տարիներ միմեանց դէմ կանգնած՝ լուռ աղերսում են: Միմիանցից հեռու, իսպառ բաժանուած՝ ամենն իւր համար պատան է կարում:

Ու կեանքը դժբախտ, չոր ու տաղտկալի տանջանքներ միայն երկուսի համար պատրաստած ունիք Թարգմանն է պակաս, Բաբն<sup>1)</sup> է բացակայ:

Եւ վայելչութիւն ու կեանք երջանիկ երկրիս երեսից իսպառ խուսափած, այլևս մեզի այց չեն անելու, քանի ամբոխի ու ծեր հանճարի-սրտի ու մտքի միաւորումից լոյս աջխարհ չգայ վեհափառ հոգին — հոգին սիրավառ:

1) Բաբ նշանակում է գուռն: Այսպէս կոչեց իրան բարիականութեան հիմնագիրը (Բաբ ճշմարտութեան):

Բ.

Ը Ր Զ Ա Պ Ա Տ Հ .

**Հ**եռու, շատ հեռու լայն անապատի աւագեայ ծովից, որի ընդարձակ, շիկացած դէմքը անվերջ փռուելով գնում փարւում է կապոյտ երկնքի թանձր փեշերին՝ հեռու, այն կոզմը կապոյտ երկնքի ու աւագների յաւիտենական դաշնավայրերից պատկերը ջոկ է։ Արարիչն արդեօք բռնի, քմահաճ շարամտութեամբ ծաղրել կամեցաւ խեղճ երկըագնդի հսկայ տիպարը, Այնտեղ այլ պատկեր, այլ կեանք էր տիրում։

Ահա բարձրաբերձ հսկայ լեռների սէգ կատարները յաւերժական ձեան հաստ քուլաների վիթխարի գլխարկ գլուխը կոխած, իրանց դարաւոր անյագ պապակին դագաղ են հիւսում։ Բայց սրտներն այրւած, կուրծքը տառապած բարդ քուլաների բեռան ճնշումից՝ մեղմ հեկեկանքով անվերջ զայրոյթի արցունք են ցայտում իրանց փեշերից։ Եւ արցունքները վճիռ, սառնորակ, նոցա ծերացած կմաղք-այտերից միշտ գլորուելով դէպի անդունդը, գրկում են իրար առանձնութիւնը ուժի ժխտիչ է։ Ու դաշն են կապում, որ կարողանան բնութեան մոլի ինքնակալութեան

ամուր կապերը իսպառ քայքայել։ Եւ կաթիլ կաթիլ արցունքից կազմած հսկայ գետերը ամուր լեռների կուրծքը ճեղելով դէպի ընդարձակ ու ազատ դաշն են փութով ընթանում։ Ու միշտ վազում են։ վազում են նոքա կատար ածելու վեհ ինքնակալի հուժկութնութեան անքակտ օրէնքը։ Նոքա վազում են յագեցնելու իրանց անսպառ, յաւէտ ապրելու անիմաստ տենչը։ Ու կապոյտ ովկիանն իւր սպառնալից վիթխարի հայեացքն դէպի լեռների սեպ գագաթները բարկացայտ յառած՝ նոցա կտակածի իրան աւանդը յետ է պահանջում։ Եւ հսկայ սարերն ամութի թանձը, անթափանց քօղը դէմքերին փոած, նոքա հայեացքի սարսափը սրտին, անվերջ արցունք են նորան ուղարկում։

Այնտեղ, լեռների սէգ գագաթներին ու անդնդախոր լայն լայն ձորերի մութ, մշտամրմունչ խոր յատակներում տարագիր քաջքեր, յոխորդ տիպաններ հսկայ խաղերի ու պայքարների արիւնոտ մարտի դաշտ են յօրինում։

Այնտեղ, սոսկալի նոցա գոռոցից գետը սարսափած, իրան թևերը շուտափոյթ վազքով շուրջը հաւաքած, անդունդի մէջն է դիակը նետում շնչասպառ ճեմով։ Այնտեղ երկինքը բարկացայտ շեշտով կարկուտ ու կայծակ, անձըն է շպրտում։ Եւ ի պատասխան նորա արշաւին՝ ծերունի հսկան վիրաւոր կուրծքը յանկարծ պատռելով, իւր ծոցում թաղուած զայրոյթի թոյնը ահեղ շառաշով երկինք է նետում։ Կայծակ, փոթորիկ, հրաբուղին, կարկուտ յաւիտենական կուրի սուսերը ձեռներին առած մի օրհասական

ռազմ են մղում:

Ու մերթ երկինքը յաղթուած երկրի տիտան ուժերից, վշտի թանձրամած քողով պատում է իրան երեսը և արցունքների հեղեղ է թափում, անողոք երկրի շիկացած կուրծքը ու գեհեն դարձած սիրտն ամոքելու: Եւ մերթ երկիրը յաղթուած սոսկալի անվերջ պայքարում, թարմ մամուռների ու հսկայ կաղնու բիւր արմատների թանձր սաւանն է փռում իւր դէմքի անթիւ վէրքերին:

Այնտեղ, անժափանց, կոյս անապատի մութն խռըշերում առիւծն ու վագրը գոյութեան կռուի անխախտ օրէնքն են միշտ յաւերժացնում: Այնտեղ բընութիւնն իւր սին պճըանքով երջանիկ կեանքի ու շուայլութեան քարոզ է խօսում:

Երկինքն այնտեղից՝ մերթ իւր ընկճումից զայրոյրթի հառաչ, մերթ յոխորդացած իւր յաղթանակով, սնապարծութեան քահ քահ է դրկում դէպի խըդճալի մեղկ ովազիսի կարճաշունչ կեանքը:



Փ.

ՈՎԱԶԻՍԸ.

Շիկացած, թրծուն, չոր աւազների անթիւ բազմութեան բաճկոնը հազած, խեղճ ովազիսը շարքաշ օքերի տաղտուկ ու գտնդադ ծանը անիւնիրն է մեղմ պտտնցնում: Ասուակը այնտեղ իւր ծնուած օրէց մահւան երկիւզի դառն երկունքով է հազիւ խոխոջում:

Փոքրիկ ծառները խորշակի անից միշտ դողդողում են և տերենները հազիւ կեանք առած մահւան զեղնագոյն զգեստն են հագնում: Ու սաղարթները անբախտ թթինու՝ յար սարսափելով չոր անապատի այլանդակ տեսքից, սոսկում են նորա դաժան հայեացքից, և զլուխները դէպի ցած թեքած, մօտակայ առուի ու կանաչների խարուսիկ յուսով են միսիթարւում: Ու շնն գիտակցում անապատային սև մեռելութեան ներկայութիւնը:

Այնտեղ զեղնաւուն չոր կանաչները յաւիտենական ողբ են յօրինում նիհար վարդերի, թարշամած ծաղկի շիրիմի վերայ: Ամեն կենդանի իւր սահմանն ունի, որից անցնելը ցնորք է թւում և որի շէմքին մահուան երկիւզի ազդն է դրօշմուած: Այնտեղ բոլորն են սահմա-

նով ապրում, սահմանը այնտեղ բռնակալ ոյժ է:  
Բայց բնութիւնը իրեկ բարի հայր, որ իւր մանկիին գնդակ է տալիս իրան խփելու՝ սիրում է զինել իւր հետ զաւակին իրան հետ պայքար մտնելու համար. և հմուտ կռւող, պայքարը սիրող արարածներից ամենազօրը նա ճանաշում է երկոտ կենդանուն:

Ու հին, վաղեմի ժամանակներից հետ ովագիսի նեղ շըջափակում կացինը ձեռին տառապող մարզը թոյլ հարուածներ էր տեղում բնութեան բութ ճիրաններին՝ կեանքի աւերիչ. Բայց նա էլ երկշոտ՝ աւազի դժգոյն տեսքից գանելով մահից զողում էր. Եւ մերթ վշտաբեկ բեռը քաշելիս, մերթ անուրջների գունատ արգանդում ականջը լարած տենչում է լսել հողմերից քշուած կախարդիչ ձայներ. Ու նորա հոգին անվերջ կարօտի տենչանք է երկնում դէպի ըստեղծողն շքնաղ հնչիւնի:

Եւ հնչիւնները անուշ, երջանիկ, բերկրալից կեանքի շարականների թոյլ բեկորներն են, որ ծընունդ առած ճոխ շըջապատի լեռների գլխին, հողմերին հեծած թռչում են դէպի խեղճ ովագիսի՝ նեղ սահմաններում մահուան երկիւղի գոգում տառապող թշուառ հիւրերը, երջանիկ կեանքի աւետիք տալու. Եւ հնչիւնները ծնուած սարերի ազատ կատարին, մինչև աւազեայ բիւր հատիկները անվերջ համընկով մեղմ ովագիսի կրծքին փարուելը, մահուան երկիւղի զգեստ են հագնում:

Բայց ովագիսը յաւէտ տենչում է, Անզօր առուակը՝ հողմի շըթունքից լեռները ճեղքող հզօր գետերի գո-

շիւնն է լսում. Լալկան ուռենին խորշակի միջից հսկայ կաղնիի սօսափման մի թոյլ շեշտն է կլանում. Վախ-կոտնապաստակն զիշերուայ կէսին քունը խանգարած, ականջն է խլշում՝ թէ զուցէ ինքն էլ հողմերի բերած խօսքի բեռներից բաժին ստանայ:

Եւ մարզը այնտեղ անյաղ, անսփոփ՝ զըսի ձայների օրօր է տենչում, իւր մեղկ մարմնի զողացող շղերն ամրապնդելու. ու միշտ է աենչում. Դիշերն անկողնում անուրջների մէջ, ցերեկը հանգիստ առուի մօտ նստած, կամ նապաստակի համեղ պատառը բերան տանելիս, նա ականջները պատրաստ է պահում, հողմից խլելու անուշիկ ձայները. Նա կարօտում է թէ առիւծների հզօր մառնչին, թէ ջրվէժների յախուռն երգերին. Թէ հրաբուղիսի, կայծակի, շանթի ահեղ հարուածին և թէ երկոտնեայ փոքրիկ հսկայի անվերջ պայքարի յոխորդ շեշտերին:

3209  
10



Պ.

ՄԵՆԱԿՈՐԸ.

Հանիս սերունդներ տենչանքով մեռան։ Ընցաւ ժամանակ և ովազիսի հէզ բնիկները աշակերտ զարձան մեծ անապատին։ Ու աւազների անշարժ հատիկից օրինակ առած, փոքրիկ վտակը թափը կողցը աճանի ստեղծեց։ Մարգը մոռացաւ կարմիր ու փըթթան վարդի կարօտը, եւ ուսիները ճիւղերը կախած՝ չուզեցին լսել հողմի ծալքերում ամուր ծրաբած իրանց քոյրերի ջերմ բարեների մեղմիկ փսփսոցը։ Քաջ առիւծների թոյլ սերունդները անամու երկնքի հայեացքին ընտել՝ չուզեցին հողմի թոյլ հնչիւնների խաբուսիկ յուսով մինչե վերջ ապել։


Ու մարդիկ այնտեղ՝ շուրջը անապատ, առաջը ճահիճ, կողմին թառամած — հազիւ հաղ շնչող ծառներ ու կանաչ, վերը միշտ ապուշ, կապուտակ երկինք, մոռացան առենջը՝ փայլակ-կայծակից, բնութեան ահեղ փոթորիկներից՝ իրանց աւետիք բերող շեշտերի...։ Դարեր ապրեցան առանց զգալու, Դարերը զանգաղ գորուում էին։

Եւ մէկը միայն մերկ անապատի մեղկ զաւակ-

ներից իւր սրտի խորբում անյագ կարօտը սիրով փայփայեց, և ճակատազրի որոշմանը դէմ՝ ուզեցաւ թոշն դէպ անյայտ հեռուն, մտքի թներով անվերջ սաւառնել հօրիզոններում ու խորասուզուել տիեզերական զաղանիքների մէջ։ Բայց նորա լեզուն աղուախօս, թոթով երբ որ պատմում էր իւր գիշերային անուշների մէջ տեսած անհման ու չնաշխարհիկ բիւր տեսիլներից, բոլորը մէկտեղ — անապատ, ճահիճ, խոտերն ու արմաւ, երկինք, հօրիզոններ բազմութիւնը իւր նմանների՝ նորան ծանակի, կծու ծաղրանքի էին ենթարկում։ Խսկ նա միշտ անյագ, ու միշտ տենչացող՝ ելնում էր ծառը հեռուն զիտելու. և աշքն էր փակում շուրջը նայելիս, գարշահոտ ճահճի գոլորշուց զզուած։ Կէս վիշերներին նա գուրս էր զալիս լսելու գորտի անվերջ կրկոռոցը՝ իւր սրտի ձայնին գուցէ պատասխան նոցանից լսէր։ Եւ երեկոյեան երբ հողմն էր փշում, նա միշտ բլուրի գագաթին՝ կանգնած՝ սրտի ականջը սաստիկ լարում էր, նորա բազմաթիւ խորշերը լցնել քամիի բերած՝ զուցէ սխալմամբ՝ շրջաղ շեշտերով։

Ու այն շեշտերը՝ հողմի ծրաբում, նըա խեղճ հոգին ալեկոծում են։ Այնտեղ նա կանգնած հողմերի դիմաց, արոփող բըտով անվերջ լսում էր հեռուից, շատ հեռուից-զատարկ ու անծայր հօրիզոններից շատ հեռու թաղուած պայքարի ձայնը — ծառի սօսափիւն, առուի խոխոզը, ջրվէժի զոշը, առիւծի մըռունչ ու տիտանների սըի շառաշը, և նոցա միջից մուրճերի անվերջ, թոյլ ու տաղտկալի, բայց յաղթանակող ծանը հարուածը։ Ու նորա տենչն էր մաս-

նակից լինել այդ օրհասական յախուռն պայքարին;  
Ու շրջապատը հալածեց նորան, նա մնաց մե-  
նակ. ատեց բոլորին. իրան վշտերը սարին պահ տուեց,  
ու ծանր ժայռը իւր սրտում թաղուած բիւր փա-  
փափների շերիմին դրեց: Այսպէս նա անցուց մի մա-  
նուկ հասակ՝ լի սին տենչանքով. լի սին փափագով,  
ու յուսահատուած աշքերը յառեց իրան սպասող  
դանդաղուտ մահուան:



Ե.

Կ Ա Ր Ա Ւ Ա Ն Բ.

Յերեկուայ տապից խոնչած մարմինը հազիւ  
կազզուրած, լուսնի մեղմ լոյսը իրեն առաջնորդ՝  
շարժուել սկսեց մեծ կարաւանը: Սստղերն ուղե-  
ցոյց, լուսինը փարոս նա ընտրելով ճանապարհ ըն-  
կաւ: Մերկ անապատի բնակիչները դարաւոր նիրհից  
յանկարծ սթափուած, ականջնին սրած ունկնդրում  
են անծանօթ ձայնին: Բախտաւոր լուսինն երջանիկ  
ժապով իւր պարտուած քրոջ-քնած արևի նահանջն  
է ծաղրում և իւր համախոհ բիւր ընկերներին հան-  
դէս կոշելով, իւր յաղթանակն է տօնել ցանկանում:

Եւ անապատը — տիեզերական խորին լուսիթեան  
աւանդապահնը իրքե յանցապարտ, ոճիր տիսնելու  
դերը ստանձնած՝ կիմախուփ աշքով վկայ է դառնում  
ճակատագրից իրեն յանձնուած ուխտի քայքայման:

Եւ աւագները, կարծես, գիտակից իրանց երդումի  
իսպառ կործանման, սոսկում են իրանց նիրհը խան-  
գարող զանգակի ձայնից: ու արեգակի վառ ճառա-  
գայթի անհետ թաղումից համարձակութեան թոյլ  
նետով զինուած, ուզում են մնալ անմասն ոճիրին

—իրանց՝ լուսթեան աշակերտ դարձած՝ ականջին հասնող դանդաղ շեշտերը միմեանց են տալիս, հեռու վանելով դէպ հօրիզոնի անծայր դագաղը։ Ու զանգակների մեզմ զօղանչիւնը բաղխուելով օդի նիրհուն շերտերին ալեկոծում է լուռ հօրիզոնը և իւր տատանման անզօր նետերով նորա շերտերը դանդաղ համբելով, առաջ է գնում, մինչև շնչասպառ դիտին փռուելը։

Մեծ կարաւանի անհոգ տէրերը մերկ անտապատի նիբնը ծաղրելով երկնի ու երկրի պայքարն են պատմում։ Ուղղերը հաղարտ իրանց քեռներով՝ արհամարանքի ժպիտն աշքերին գլուխնին տնկած, ծանր քայլերով առաջ են գնում։ և հայեացըները մուժ հօրիզոնի կըծքին յառելով՝ մեծ ովազիսն են տեսնել ցանկանում։


Ցերեկ ու գիշեր, արև ու լուսին բալզմաթիւ անդամ միմեանց հրաժեշտ ու ուղայն տուին, մինչ կարաւանը ուժասպառ, յողնած՝ հանգիստ շունչ առաւ մեծ ովազիսի առուակի ափին։ Եւ ովազիսը իւր որդիներով քնոյ անկողնից ոտքի կանգնեցաւ ողջոյն առնելու հեռու աշխարհից։

Մենաւորը հէզ բարախուն սրտով նորել հիւրերի շարքերում վնտուց մի վեհազն հոգի, կըծքի ամրակուռ ժայռերի տակից վաշտ վաշտ վշտերը իրեն հրաբուղին նորա ականջին ի լուր ժափելու։ Մեծ կարաւանի ուղեկիցները իրենց լուրերի ծրարը բացած անփայթ պատմեցին լեռան ու գետի, երկնի ու երկրի, ծովի, փոթորկի անվերջ պայքարը—հեռու աշխարհի սրընթաց կեանքի ելեէջները։ Պատմեցին նոքա ճոխ

շրջապատի պերճափառ կետնքը ու անապատի ծաղը բեցին կեանքը—մհուած ու զունատ։ Եւ ովազիսի քընակիշները հագիւ սթափուած՝ իրանց զաղաղը տեսան առաջնին։

Ովազիսն յանկարծ ալեկոծուեցաւ...  
Ու նորից քնեց։

111



11

«Ճահճի մօտ կանգնած ես պիտի լսեմ անուշ կարկաշը վճիտ առուակի: ու չոր խոտերի գունատ ստուերում պիտի համարեմ բնիկ աշխարհիս կարմիր վարդերը:

«Անգարձ անջատման համբոյրս տուէք, մանուկ օրերի անհոգ խնջոքում ինձ հետ թռչկոտող մոերիմներիս:

«Ասացէք նոցա. իրանց պայքարի ելեէջներում քրտնաթոր ճակտով կորւ մղելիս, թողչ չմոռանան ազատ, տենչալի կոռու դաշտերում՝ բութ սրով գինած հեռաւոր երկրում միայնակ կուող իրանց մտերմի հէդ ուրուականը:

«Ասացէք նոցա. մեծ անապատի եթէ խորշակը կուրութեան քօղը՝ թանձը ու խաւար՝ փոէ աշերիս, ես այդ թանձրամած քօղի յետնում միշտ ոլիտի տեսնեմ նոցա պատկերը. եթէ այստեղի մեծ լուսթիւնը ամուր խցանիվ փակէ ականջներս, ես այդ լուսթեան մեռած էջերից նոցա երջանիկ, աշխոյժ երդերի ձայնը կը լսեմ:

«Ասացէք, եթէ մի դաժան բախտի ծանր հարւածով, նոցանից անջատ. այս ովագիսում ես շիրիմ փոնմ, իմ քնած սիրուը սնար պիտ դարձնեմ նոցա անմոռաց յիշատակների գեղանի դէմքին:

«Ասացէք, այնտեղ, ամպշող երկնքին, որ ես նորանից շատ հեռու վճռեցի մեռնել, բայց մոռացութեան սև ուրուականը չէ կարող մօտ գալ երբէք իմ հողուն: Ասացէք խրոխտ լեռների խմբին, որ ես այս արձակ, լայն անապատում միշտ պիտի յիշեմ մանուկ օրերիս անմեղ կատակը նոցա ծառազարդ նեղ ծըմակներում»:

2.

ԵԿԻՈՐԾ.

Ազատ լեռների հովերին կարօտ, անապատային խորշակից զգուած կարաւանն նորից ոտքի կանգնեցաւ. Լեռան զովասուն օգերին սովորած, նա չը դիմացաւ լերկ անապատի կիզիչ արևին, ու իւր բեռները այնտեղ թողնելով, նորից իւր ճամբան – ճոխշը շրջապատի ուղին դուրս եկաւ. Եւ ովագիսը բարի երթ մաղթեց: Բայց կարաւանի ուղեկիցներից մի թըրթուն հոգի, մի սիրտ բարախուն քմահաճ կամքով ուզեց մինչև վերջ հիւր մնալ այնտեղ:

«Իմ հրաժեշտի ողջոյնը տուէք ազատ լեռների վեհ կատարներին – ասաց վիրաւոր սրտի հառաջով իւր ընկերներին:

«Ասացէք, այնտեղ, ամպշող երկնքին, որ ես նորանից շատ հեռու վճռեցի մեռնել, բայց մոռացութեան սև ուրուականը չէ կարող մօտ գալ երբէք իմ հողուն: Ասացէք խրոխտ լեռների խմբին, որ ես այս արձակ, լայն անապատում միշտ պիտի յիշեմ մանուկ օրերիս անմեղ կատակը նոցա ծառազարդ նեղ ծըմակներում»:

տեղ ապրել։ Մեծ անապատի քարացած ծովի նիր-  
հը խանգարող՝ ես մի մեղմ սիր եմ. իմ անզօր ու  
թոյլ, համեստ ընթացքով՝ մահուան անկողնում մըա-  
փող ալեաց յաւիտենական, հանգիստ ու անուշ նիրհը  
խանգարել՝ ինձ վիճակուած է աշխարհ տեսնելուս  
առաջին օրից։

«Ասացէք նոցա, եթէ թոխըս բաղխուելով յան-  
կարծ ծով անապատի քար ալիքների հակայ պատե-  
րին, անոյժ ու լրեալ մահուան անկողին փնտուելու  
լինի՝ շմոռանան իրանց հզօր շեշտերով այն սէկ լեռ-  
ներից ոյժ առաքելու։

«Իսկ եթէ յանկարծ հզօր շեշտերի միշտ կարօտ  
մատ, ճակատազրից ինձ վիճակուած է. եթէ շեշտե-  
րը շիրիմ միայն երջանկացնեն իրանց սիրակէզ տաք  
համբոյըներով. այնժամ, ասացէք, թող ընկերներիս  
բազմութան սիջից զոնէ մի հոգի փափագ ունենայ  
մեծ անապատի լուակեաց կրծքում անզօր բարախող  
մինաւոր սըտին ողջոյն բերելու...»։

Եւ կարաւանը ճանապարհ ընկաւ, նորեկի սըտի  
վշտի լեռները իրան բեռ շինած. նորեկը տիսուր  
դուրս եկաւ նորան ողջերթ մաղթելու, և արտասու-  
բով ճանապարհ դրեց. ու իւր թախծապատ, նիհար  
աշքերը նոցա ընթացքին շաբունակ յառած՝ մեղմիկ  
դիտում էր, մինչեւ որ քօղը լայն հօրիզոնի իրան փե-  
շերով յաւիտեան ծածկեց նորա աշքերից ուղգերի  
երկար ու անվերջ շարքը։

Է.

Ս Ա Դ Մ Ե Բ.

**Ա**ճա ովագիսն իւր բնիկներով հեռաւոր երկրից  
եկած նորեկի աշքի առաջն է. չետախոյզ մտքով մե-  
նաւոր հոգին մօտեցաւ նորան ու հարց է տալիս:  
«Ինչու միացիր, չինի՞ արգեօք, քո ընկերների բոլոր  
պատմածը ստի էր հիւտուածք, իսկապէս արգեօք  
մեր շրջապատը պերճութեան ծոցում ազատ լողում  
է, և նա զին չունի, միթէ, քեզ համար. թէ կեանքը  
այնտեղ աւելի վատթար՝ քեզի յորդորեց մի նոր  
կեանք փնտուել. Այնտեղի ցրտից քո մըսած հոգին  
տաք ովագիսի գըկմւմ ցանկացաւ տպաստան փնտուել»։

Եկտոր.

Եմեն տեղ կեանքը իրան զինն ունի. կեանքը  
սահուն է, որպէս վաղանցուկ երազի մի էջ. բայց  
այն օրուանից, երբ մարզը վստահ իրան հանճարին,  
սկսեց կեանքի խորշերը քննել՝ նա գարձաւ մի բեռ  
և մարդիկ իրենք բեռ յօրինեցին ու տակը մտած  
իրանց ոյժերը ցանկացան փորձել, եւ ամեն մէկը  
իւր բեռը գտաւ ու բեռանն ընտթեան զէմը

կոռւի դուրս եկաւ. Բայց վատոյժ մարդիկ կոռւից սարսափած՝ բեռը ձգեցին, անապատ փախան:

### Մենատոր.

Ուրեմն դու էլ փախստական ես. մարտի գու դաշտում զէնքերդ թողած քաջ ընկերներիդ. նոցաշարքերից փախար սարսափած:

### Եկտոր.

Ով որ կուռւմ է, նա բնութիւնից իրեն կտակած դերն է կատարում: Կոիւը միակ ազատ ուղին է, որ մարդոց իբրև լուսատու փարոս, առաջնորդում է դէպի մի անյայտ, բայց վեհ նպատակ. բայց երբ մի հողի՝ թիւր ղինւորներից կազմած շարքի մէջ սուսերը ձեռքին կոռւի է ելնում, այդ չէ ապացոյց նորս վեհ կոչման ուղին գտնելուն:

Միթէ նաւակը գետի ալիքին իւր բունը յենած նորա ընթացքով առաջ վազելիս՝ խիզախ քաջութեան մի օրինակ է. ընթացքը փոխիր գետին հակառակ, տես նա կարճու է ալիքների դէմ կոռւի դուրս ելնել ու իրան համար ճանապահ հարթել: Հոսանքին ընդգէմ, յորգահոս գետի կուրծքը պատուելով եթէ նա գնայ՝ ուժգին յորձանքը արհամարելով, այնժամ մենք կասենք որ նա կոռւմ է:

Եւ շրջապատի անդուլ պայքարում զէնքը իմ ձեռքին երբ կուռւմ էր, ներքին մի խուլ ձայն կարծես ասում էր. «այդ կոռւի ուղին վաղուց էր պատրաստ, կամայ, ակամայ պիտի կոռւէիր. Կարճու ես ուրոյն պայքար ստեղծել. մահուան զագաղում հան-

զիստ մրափող խեղճ հոգիներին կարող ես զէնք տալ կոռւի ելնելու: Մնապատ մտիր, այնտեղ էլ կոռւի ու իբալանցման որոմ սերմանիր, ու խիզճդ հանգիստ կարող ես ասել՝ քեզ յահճնած պարտքը կատար ածեցիր:

Թողեցի այնտեղ կոիւը պատրաստ, մի նոր ու հանգիստ կեանք վնտուցի՝ կոիւ ստեղծել իմ թոյլ ուժերով:

### Մենատոր. 111

Բայց գու վստահ ես, որ մեռած հոգին վերջին ջղաձիդ ցնցումով ուժգին ոտքի կը կանգնի կոիւ մը-զելու. գու սոսկ մի հողի՝ կարճու ես անծայր անապատի մէջ մի հսկայ պայքար— կոիւ յօրինել. Եւ միթէ մարդը իւր թոյլ ուժերով կարող է դուրս գալ. ճակատագրից իրեն որոշուած կեանքը փոխելու: Մարդը մի ստրուկ ճակատագրին՝ նբա սահմանած ուղին եղծելով սրբապղծութիւն չէ անում արդեօք:

### Եկտոր.

Վատոյժ, թուլասիրտ, կոռւից խուսափած խեղճ մարդիկ միայն եղան հեղինակ ճակատագրի անխախտ օրէնքի: Տես, անպապատը՝ որին աւանդ էր մեծ լուսինը ու մահը անշարժ— ինչպէս իւր կրծքում գաղտնի փայքայեց ու կեանք ստեղծեց. թիւր աւագների շրջանակի մէջ ովազիսն ինչպէս ապրել կամեցաւ:

Խեղճ, ստրուկ մարդիկ, ձեր խղճի ազատ ձայնը խեղդելու մի անզօր ճիգով ճակատագրին էք յանցապարտ գարձնում: Վեհ բնութիւնը բոլորին զինեց,

բայց մարդիկ անարդ՝ զենքերը թողած, անձնատուք եղան իրանց նմանին:

Ունիս բազուկներ՝ անձդ պաշտպանող, զօրեղ միտք, հոգի ու սիրտ զգայուն՝ ազատ աշխարհին տիրելու համար: Դուրս եկ կոռուի դաշտ, մարտնչիր, ընկեր, այդ է ճանապարհն մեր խղճուկ՝ կեանքի վեհ նպատակի:

### Մենատը.

Երբ թմբած հոգիս լուռ անապատի մժութեան ծոցում կամազուրկ, անթե թափառումներով սնար էր փնտում. երբ կեանքը դժոյն՝ աև ուրուսկանի սքեմը հագած իրան այլանդակ դէմքն էր ցոյց տալին. կամ երբ խորշակը իրան մահարեր, քնարբու շնչով կեանքիս գեղանի հասկն էր սևացնում... մի գաղտնի պայքար՝ անյայտ, անձանօթ, բայց շատ սիրելի՝ կը ծրիս տակ յանկալծ սկսում էր եռալ. Եքնած հոգոյս մարած աշքերը ճիգն էին թափում՝ մահուան սքեմի ծալքերի տակից մի շնաշխարհիկ ճառագայթ գտնել. և հոգիս հիւանդ, լուռ տատանումով, ականջը սրած խորշակի միջից տենչում էր լսել սիրելի շեշտեր.. անյայտ ու օտար, անհասկանալի, բայց ինձ կախարդող, զըաւիշ ձայներ:

Սրդեօք պայքարի արձագանքը չէր, որ զիշեր ցերեկ բանտարկուած սրտիս քունը խանգարած նրան տանջում էր իրան կոչերով. և հոգիս մնուած մեծ անապատի լուռ ու քնարեր մահուան երդիւզով, կեանքի անօթից միշտ փափազում էր սնունդ մտանալ:

Բայց բախտը անդութ, չարանենդ ժպտով ինձ մի կւանք զծեց նման սև մահին, որի սահմանում անօդ ու անլոյս՝ առաջին օրից տառապանքն ընկաւ խեղճ հոգուս բաժին:

Ու ես տոշորուած անյայտ շեշտերի լուծման տենչանքով, անվերջ գարուններ դանգաղ համրեցի. և քնած հոգիս լքուած, յուսահատ՝ դաղաղը ընտրեց իրան ապաւէն:

Հեռու աշխարհից բերած նոր զարնան խաբում սիկ յուսով դու կամենում ես նոր կեանք ներշնչել մահուան զիրկն ընկած իմ մեռած հոգուն. բայց դա ցնորք չէ, ես չիմ հաւատում...

### Եկուր.

Դու շիս հաւատում. միթէ մոռացար մահուկ օրերիդ մնկեղծ ըղձերը. Անոքա միթէ դաժան հարւածով գերեզման մտան դեռ կեանք չը տեսած:

Բայց արա հոգուդ քնած աշքերը. սիրտդ ուղիւր, միտքդ ուղեցոյց ու կամքդ նոցա հզօր զեկավար՝ անվեներ ճեմով առաջ ցնթացիր. պայքարն առաջդ է, մահուկ օրերիդ ըղձերին թարդման՝ ահա կանգնած եմ. առաջ սլանանք ձեռք ձեռքի տուած լոյս փնտուելու պըթւնում մարտում. լոյսը սիրում է իրան հիւլերին արիւնից հիւսուած կարմիր քօղի տակ այցի կոչելու. Երիւնն է միակ նորա ճանապարհ:

### Մենատը.

Ըղձերս թաղուած... նոյն շիրիմին իմ թաղող հոգին գարձաւ սոսկ հսկիշ. եւ ինչ է մնում իմ աշքի

առաջ — մի կեանք դժնդակ՝ մահուան պատկերով, որ  
խզնուկ հոգոյս զերագոյն նուէր սոսկումն է բերում:  
Ողջ կեանքս անցաւ լոկ անուրջներով և սրտիս ան-  
թիւ անուշ ըղձերը անհետ չքացան միրաժի նման:  
2արն յաղթանակեց, իմ մէջ թողնելով ծանակի հա-  
մար, լոկ յիշողութիւնն անցած օրերիս:

Ես էլ կեանք շունիմ, քո ուղին բռնիր դու այս  
վայրկենիս իմ հոգու համար մի անկոշ հիւր ես. հոգիս  
թախծութեան մրուրը ծծած՝ քո վառ խօսքերից չէ  
կարույանկարծ մահուան պինդ գրկից աշքերը բանալ:

Ուր էիր այնժամ, երբ հողմի դիմաց անքուն  
գիշերներ կանգնած զլխաբաց, նորա շվեոցից իմ  
մանուկ հոգին տենչում էր անմահ շեշտեր կլանել:  
Չատ յապաղեցար. վաղուց պիտագայիր քաղցս յա-  
գեցնել, երբ հոգիս կայտառ՝ դեռ ընդունակ էր ա-  
զատ խոյանքներ ու թոիշք զործել: Այժմ շատ ուշ է.  
Ես մահուան գիրկն եմ ու մահին ընկեր: Դեռ ովա-  
գիսում մանուկ հոգիներ շափազանց շատ կան, որ  
չեն ճաշակել մահուան դառնաղի թոյնի բաժտկից.  
Փնտոիր դու նոցա ու քո խօսքերով նոցա սրտերը  
ազատ պայքարի ասպարէզ արա:

Մանուկ ըղձերո. ասա ինձ, ինչպէս կարող են  
նոքա ապրել իմ հոգում, քանի որ հոգիս այլնս շու-  
նի մի կաթիլ անգամ կենսատու հիւթից, նոցա շըր-  
թունքը կեանքով ցողելու:

### Եկար.

Եկ ինձ հետ մէկտեղ, հոգիդ միշտ անմահ՝  
քնած է միայն:

### Մենատր.

Ո՛չ, ով ուղեոր. քո հզօր ձայնը չէ կարող եղ-  
ծել ճակատագրի բիթտ որոշումը. կուրծքս վշտարեկ՝  
հողի զովարաը հաստաշերտ սքիմ ուզում է հագնել,  
իրան իղձերը վաղուց կտակած նորա խնամքին:

|||



||

3

Ը Ա Ն Տ Ա Լ Ո Ս.

Ա եղկ ովագիսի անկոչ մարգարէն հէզ մենաւորին հրաժեշտ տալով, ցուպը ձեռքն առած ասպարէզ իջաւ ամբոխի սրտում սերմեր ցանելու. Ամբոխը ապշած նորեկի տեսքից, ականհջը՝ սրած նորան լսում էր: Նա այսպէս սկսեց:

«Մեծ աստուածներին իւր ամբիծ վարքով սիրելի եղաւ, ըստ հին պատմութեան, մի ծեր թագաւոր. ու Լիւդիայի Տանտալ արքային հին աստուածները երկինք հանեցին իրանց երջանիկ, անմահ խընջոյքին յաւէտ մասնակից անելու համար-իբրև վարձ նորա բիւր ծառայութեանց երկնի ու երկրի հզօր տէրերին: Բայց նորա հոգին աշխարհից զատուած, մարզկանցից հեռու եթերի կեանքին անընտել մնաց. անիղձ դրախտի անփափագ կեանքը նորա խեղճ հոգուն տաղտուկ թուեցաւ. և չնաշխարհիկ հրեղէնների անմահ կաճառում ցաւոտ երկրի վշտալից կեանքի անվերջ փափագով նա տոչորւում էր, ու նա ծնկաշող մեծ աստուածներից հրաման խնդրեց, երբեմն երբեմն այցի ելնելու իւր նմաններին երկրի վերայ. Եւ աստ-

ւածների ու տիեզերքի մութ գաղտնիքները մարդոց ականջին սկսեց փսփսալ: Բայց ամենազէտ աստւածներն հզօր՝ անհուն բարկութեան զայրոյթով լցուած՝ նորա դաւաճան, անհանգիստ հոգին երկնի բարձունքից ահեղ որոտով երկրի խորքը - դժոխը զրկեցին, սոսկալի վճիռ դատապարտութեան կնքելով նորա ըմբոստ ճակատին: Տանտալ արքայի ստահակ հոգին դատապարտուեցաւ միշտ տառապելու դժոխքի սրտում բիրտ անյագութեան սուր ճիրաններից: Վճիտ առուակը պատած արքայի մերկ սրբունքները՝ շոյում էր մեղմիկ նորա ծնկները. և խընձորենին իւր հասուն բելքի գեղանի փունջը տարութերում էր նորա տինչապատ աշքերի առաջ: Եւ անյագ արքան պապակ շըթունքը երբ մօտ էր տանում զով ալիքներին՝ նորա շուտափոյթ ցամաքում էին. ու երբ յոգնատանջ ձեռքն էր մօտեցնում հասուն մրգերին, նորա սարսափած դէպի վեր էին սլանում յանկարծ: Թշուառ Տանտալը դատապարտուեցաւ անյագ տանջուելու դժոխքի կողում, բայց նորա հոգին իւր խոր տանջանքից երբեմն սթափուած՝ իւր երջանկութեան վեհ գիտակցութեան բաժակն էր ըմսում:

«Ու գուցէ մի օր երկրի գաճաճ աստուածներն հզօր յաւէտ տանջրւելու վճիռը կարգան իմ ըմբոստ գլխին և ես տառապեմ երկրի դժոխքի մթին խորշերում. բայց հոգիս անմահ՝ արհամարհանքի երջանիկ ժպտով պիտի յոխորդայ, որ կարողացաւ մեծ աստուածների հզօր գայսոնի, ոսկեհուռ թագի ու մարզարտապատ անխորտակ գահի գաղտնիքը պատմել իւր նմանների խուլ ականջներին:

Ծ-հ, տգէտ ամբոխ, աշքդ բաց արա, դու քո  
ձեռքերով խորան շինեցիր, նորա հոյակապ ապա-  
րանքներում քս ձեռքով կերտուած կուռքերին այսօր  
դու խունկ ես ծխում. բայց խնկիդ ծուխը վեհ  
աստուածներիդ չարանենգ քմբից արհամարհանքի  
ծիծաղ է պոկում. քո աղերսները նոցա՝ դէմքերին  
խնդում են բերում. ու արցունքներդ առատ, յորդա-  
բուղին՝ նոցա հեգնանքի տապն են զովացնում...»:

Փանատիկոս ճայն.

Սա հայհոյում է. մի լսէք սորան. սորա բերանը  
պղծութեան բաժակ՝ մահաբեր թոյն է մեզ վերայ  
սրսկում. սորա ճակատին մեծ տիեզերքի ահեղ Ա-  
րարշի անվերջ նզովքի կնիքն է զըռւած:

Խաւար գիշերի մթութեան ոգի, հեռացիր մեզ-  
նից, թող բարբաջանքդ. երկնի ու երկը մեծ Դա-  
տաւորը իրան բարկութեան հզօր շանթերը դէպի  
ցած ուղղած՝ մեզ ևս քեզ հետ կործանման գուրը  
պիտի գլորէ:

Եկտոր.

Բայց տիեզերքը չունի նզովքներ. սուր սլաքնե-  
րի, հզօր շանթերի, ահեղ մոռւնչի հէգ հեղինակը  
ձեր խեղճ ուղեղն է:

Ուրիշ ճայն.

Մի լսէք դորան, ինչեր է ասում. դա չի սար-  
սափում երկնառաք մահի դաժան ստուերից:

Եկտոր.

Ճահճի մէջ ծնուած՝ ճահճն էք ընտրել ձեզի  
օրօրոց. իսկ ովազիսի հզօր տէրերը աշքերդ պատած  
թանձրամած քողով, արգելք են դառնում դէպի փեր  
նայել կապոյտ երկնքի խոր բարձունքներին. ու մեծ  
կարիքը ձեզ բաժին տուած, խոշեր են ձգում ան-  
մեղ սրտերիդ ազատ ճախրանքի ուղիի առաջ:

Ձեր մտքի արդիւնք ձեր ծառկերը աստուած-  
ներ զարձան ստրուկ՝ սրտերիդ թոյլ տենչանքներին.  
ու բռնաբարած ձեր իրաւունքը, փակեցին ուղին սի-  
գապանծ լերանց ազատ կատարի:

Չարանենգ ժպտով երբոր բաժանուան նոքա ամ-  
րակուռ հաստ պարիսպների անխախտ հիմքերը կո-  
փել սկսեցին, զուք ձեր ընկճուած ուսերի վերայ  
բիրտ ժայուեր դրած, նոցա ձեռնարկին օգնութեան  
ելաք:

Եւ ահա, ստրուկ, խղճուկ հոգիներ, ձեր տաշեղ  
կհանքին հզօր պաշտպաններ երկնքի խորքում  
անյոյս վնտուելով՝ այնտեղ չգտաք, և ամօթապարա  
նիհար աշքերդ ձեր շուրջը դարձրած՝ երկնքի վերը  
երկրին յանձնեցիք:

Եզատ վայելիք, ձեր յօժար կամքով, նոցա հա-  
ճուքին զոհաբերեցիք. ծիծաղ ու խնդում, հըճուանք-  
ներ անհոգ նոցա նուիրած՝ սև վիշտը միայն ձեզ  
ընկեր առաք:

Եշքերդ հեծում են, սրտերդ լալիս. հոգիներդ  
ընկճուած՝ խարիսխ են փնտուում. Բայց զեռ ամլրում  
էք. այդ կոչտ ձեռքերով՝ բիրտ ու վայրինի՝ ամբա-

կուռ պատի հիմքերը փորէք. շարքաշ ուսերդ պատին դէմ տուած ահեղ զղորդով նորան կործանէք:

Այստեղից հեռու, մեծ անապատի հօրիզոնների շրջապատճերից ահա լուսում է թոյլ հեծեծիւնը ահեղ ռազմի՝ դարաւոր նիրհի ճանկում խարխափող՝ այսօր արթնացած, ձեր նմանների սէգ ողիների:

Ժաղըածու ծայն.

Հոգիս վկայ է, շատ ճիշտ է ասում. մենք կը կործանենք մեր աստուածներին, սորան կսկսենք պաշտել նոցա տեղ՝ ես էլ հրէշտակ՝ սորա պատգամը ամբոխին կտամ:

Ժեր ուլէմ.

Մեր եղուկ կեսնքի բախտի տնօրին Ռմենաշալի անքակտ վճիռով նորա պատգամը աշխարհին յայտնող սուրբ իմամները երբ արժանացան երկինք ելնելու, նոցանից յիտոյ սուրբ ճշմարտութեան մուտքը փակուած է մեր կոյը աշքերից:

Եկտոր.

Մոլորուած ամրոխ, զոռ տիեզերքը կապանքներ չունի:

Նայեցէք վերե, այնաեղ եթերը ահա փայլում է. ահա արել իւր ճառագայթով նորա զաղտնիքը ձեզ է նուիրում. իսկ երբ արել կը հանգչի հանգարտ. նորա փոխարէն լուսին ու աստղեր երկնակամարում փարոս կը զառնան ձեր տեսողութեան փակուած սահմանը պատռելու համար:

Բնութեան գիրքը ձեր առաջ փոած՝ նորա է-ջերում—յստակ ու անհուն՝ զրուած է անտես սուրբ-գրիշներով փառքը երկնքի ու կեանքն աշխարհի: Նորա էջերը վսեմ, գրաւիշ—երկինք, անապատ, հովիտ ու ծործոր՝ դէմներդ են ահա: Նորա բառերը անմահ, պերճախօս՝ վարդեր ու աւազ, ծառներ ու ծաղկունք՝ յարատե կեանքով ձեզ կոչ են անում: Ծաղիկը վայրի ու վարդը կարմիր ծնւում են, մեռնում, նռ-ըից բողբոջում՝ միծ տիեզերքի փառքը պատմելու:

Դարեր շարունակ պերճախօս լեզուով մայր տիեզերքը վեհ ճշմարտութեան զաղտնիքն էր փըս-փսում ձեր խուլ ականջին, բայց զուք անտարբեր՝ չուզեցաք մի օր ունկնդիր լինել նորա կոչերին: Բաց-ւել է բարը սուրբ ճշմարտութեան. թմրած հոգիներ, զինուեցէք հոգով: Սուրբ ճշմարտութեան լապտերը ցեռքիս ձեզ ուղեցոյց իմ, եկէք ընդառաջ. բարը բացուած է:

Յաւիտենական եթանիկ կեանքի, երկնի ու եր-կրի, մաքուր եթերի զաղանիքին թարգման, դէպ ճշմարտութիւն ձեզ առաջնորդող անձուկն ուղիի միակ Բարն եմ ես. իմ հետքից եկէք:

Մուշտայիղ.

Որոտա, երկինք, դղրդա, երկիր, փուլ եկ տիե-զերք, մահ, վրա հասիր..., այս ինչ եմ լսում:

Եկտոր.

Եեր ֆանատիկոս, և զու ծաղրածու, Ասածու պաշտօնը մաքուր երկնքից գողունի կերպով երկրում

հաստատող ժպիրն ու մոլի սև հոգիներին դաշնակից դարձած, նորա պատկերը յարաճուն ժպտով զուք կոխուում էք:

Սուրբ ճշմարտութեան բանալին զողցած, դաշան ժպիտով հէզ հոգիների աչքերը փակած, անտակ անդունդի շըթունքին կանգնած, աչքերդ յառած նոցա գլորման ելեէջներին, ձեր յաղթանակն էք սիզապանծ տօնում:

Եւ հոգիները մանուկ, երերուն՝ դեռ կեանք չըստացած, ցաւազին հեքով անդունդն են թռչում, անէծքի շանթեր վեր առաքելով՝ անդէտ թէ որին, կամ ինչու համար:

Բայց ահա, Բարը մութ գաղտնիքների ծրարը ձեռքին, եղուկ ամբոխի խուլ ականջներին նուէր է բերում:

Երկնի ու երկը անվերջ ծալքերում—մթին ու գաղտնի, ճոխ շըչապատում—մեծ ու փոթորկոտ, ու անապատում—նիրհող վիթխարի՝ հոգիս ճեմում էր խուզարկու տենչով և իւր ստեղծման առաջին օրից նա յար լսում էր մեծ տիեզերքի սիրագոշ շեշտը աստղից ու առուից, վիթխարի սարից ու անապատից—չոր ու այլանդակ. և հոգիս զինուած նորա շեշտերով, նորա պատղամը ձեզ է նուիրում:

Դու ես, հէզ ամբոխ՝ մշտահեծ, թախծոտ՝ գահազուրկ տէրը ողջ տիեզերքի:

Քրտնաթոր, կեղտոտ, բթուղեղ ոհմակ, դու ես հարտպատ ժառանգն երկը. բաց կոշտ ձեռքերդ ու յաւէտ փարիր բարախուն կըծքիդ յստակ եթերի ազատ թռիչքը:

Դու նորա տէրն ես. այս է գաղտնիքը ողջ տիեզերքի, և նորա թարգման՝ ես եմ քո Բարը:

Ճեր ուլէմ.

Լովիր, ստահակ. երկնի Արարչի քնած բարկութեան նինջն ես խոռվում:

Փանատիկոս ձայն.

Ահեղ կայծակի ուղին ես հարթում:

Ճաղրածու դէրվիշ.

Թողէր միշտ հարթի. կայծակն իւր մօրից հրահանգ ունի, թէ ումին դիպչի:

Չիատը Փէրըրաշ.

Բոնեցէք գորան. լեզուն շներին պիտի նուիրեմ:

Ճաղրածու ձայն.

Թող նոցա փորում զարշ աղիքների սուր ականջներին իւր գաղտնիքները յաւիտեան պատմէ:

Ամբոխից մի թոյլ ձայն.

Այն ինչ էր ասում . . .

Մոլորուն սքտերն տգէտ ամբոխի վշտի անկողնից յանկարծ սթափուած, սկսեցին թրթռալ սիրոյ պինդ գրկում հաճոյք վայելսղ հեշտասէր, մոլի պատանու նման. Բարի կենդանի խօսքի սերմերը փափուկ սրտերում յանկարծ ուռճացած, կըծքի վան-

դակը ցանկացան կոտրել: Եւ վահանները ամրակուռ  
կրծքի բուռն դղորդով ուռչիլ սկսեցին: Ու խելա-  
կորոյս, արբած ամբոխը ուժգին զըռհով յառաջ խի-  
զախեց, արիւնոտ մարտում կեանք վաստակելու—  
կեանք յարասլաց՝ որ նա երազում խնդրում էր իզուր,  
և յոյսը կորցրած, հանդերձեալ կեանքում ուզում էր  
դտնել...:



Թօ.

Հ Ա Լ Ա Ծ Ա Ն Ք Բ Բ.

Ψ եղկ ովազիսն ահա յանկարծ ոտքի կանգնեց  
պճնազարդ:

Սրեն այնտեղ իւր ոսկեզօծ ճառզայթով հըա-  
պոյրի շընաղ կոշեր առաքեց. և երկինքը անխախտ  
հաշտի դաշինք կուց քնած դաշտի կրծքի հետ, ու  
մեծ դաշտի կուրծքը եռաց վտակների բարձրաքր-  
քիջ խոխոչով:

2որ խոտերի ստուերի տակ վարդը կարմիր իւր  
կոկոնը փայփայեց ու ծառների սաղաթները դէպի  
երկինք աշքը ցցած՝ վեր են նայում տենչանքով: Ու  
խոշակին ուժգին հեքով տիտան հողմը բաղխուցաւ:

Իրարանցում, փայլակ, կայծակ—երկինքն ահեղ  
որոտաց, և ովազիսն պատռած կրծքից կըակ ժայթ-  
քեց զարհուրած:

Երկինք, երկիր պայքար մտած ոյժ են չափում  
համարձակ. շըշապատը լուռ դիտելով տօնում է իւր  
յաղթանակ:

Իւր կարկուտէ բիւր նետերով երկինքն անզութ,  
անողոք՝ մոլեգնօրէն անապատի շէկ շակատն է ծակ-

ծակում. և անապատն արձակ ու լայն, ահաքնից արթ-նացած՝ իւր աւագեայ գնդակներն է նորա դէմքին կատաղօրէն շպրտում:

Եւ ամբոխը իւր դարաւոր նիբհի ճանկից խուսափած, աչքը բացեց, ու երկնքի զադոնիքների մութ ճամբան է պրպտում. և գիշերուայ քունը մոռցած ճշմարտութեան արշալոյն է որոնում:

Ո՞ւր է Բարը, նա ի՞նչ ասաց, նրա բարբառն անկեղծ էր. զտնենք նորան, նորից պատմէ, թող, նա կեանքի վայելը:

Ուլէմները ու մուշտայիդ շահի զօրքով մոլեղին անէծքների բիւր նետերով կազմ ու զինուած՝ որոնում հն եկորին: Նա ամբոխի աշքից քօղը՝ խաւար, մթին, թանձրամած՝ դէն է զցել. կամ բանտ, կամ մահ, կամ կախաղան նորան պէտք է պատրաստել:

Զահի ֆէրմանն ամենազօր ու անքակտ՝ ձեռներն առած մոլաները ֆանտատիկ, ամբոխի մէջ աշք են ածում անզօր Բարին բանելու:

Ովագիսների ու անապատի, շէկ աւագների ու շոր խոտերի, տգէտ ամբոխի առապար մտքի. հէզ ոզիների մշտահեծ սրտի շար բոնակալը, երկինքը վակող, երկիրը սանձող, երկնքի ստուեր երկրի վերայ, կենտրոն աշխարհի ու աղօթարան հզօր Երարշին՝ արքայից արքան, Մհծն նասրէղին ֆանատիկների յոռի բազմութեան կենարոնում բազմած, դաժան հայեացքը յատակին յառած դժոխքն է կանշում իւրին օդնութեան, սոսկալի շարիք ու անվերջ տան-

չանք թափելու իրեն ստահակ որդոց խիզախ կըծքերին: Ու նա կատաղի զոռում էր ուժգին:

«Խղճուկ տիեզերք, փուլ եկ, կործանուիր, զի չաքիքներից միծն ու սոսկալին դու ծնար այսօր, արե՛, պարփակուիր, յաւիտենական քո խորին զբում, զի անհնազանդ՝ չուզեցաք վիտնալ ովկ է քո տէրը և լոյս տուեցիր աշխարհի նեռին. և դու, մուշտայիդ շերեխս աչքիս, քանի չարիքը իրան արմատից չի պոկւել յաւէտ. և դուք, ուլէմներ միծ անապատի, աստղազարդ երկնի բիւր զադոնիքներին խուզարկու ոզիք՝ Աստուծոյ շնորհ պատառը երբէք թող չմօտենայ ձեր ագահոտ բերնին, մինչեւ որ յանդուզն նզովից ոզու լեզուն չկտրէք: Դուք, ովկ սաղբազամ, խաներ, ֆէրբաշներ, աչք ու ականջներ պատշաճ դէնքերով զինէք շտապով և մմաս բարեւ ասէք աշխարհին, եթէ սև բախտը ձեզի չզթայ ու արքաներից հզօր արքայի անխախտ վճռի իրազործմանը միծ արեգակը ականատեսի: Զարթիք, ովկ իմ միտք, երկունքով բռնուիր, ու թող քեզանից ծնունդ ստանան մինչ օրս չեղած տանջանք սոսկալի ու տառապանքներ անլուր, մահաբեր ու մահ կատաղի»:

Եւ հզօր շահի՝ խիզը թլպատած, հոզով ներքինի բիւր ծառաները, ասպարէզ իշտն զինուած, պատրաստի՝ գտնելու Բարին և նորան մահուան դաժան ճանկերին նուէր բերելու: Բայց զուր աշխատանք, նորան չեն զտնում:

Ստրուկ ամբոխը յանկարծ սթափուած զգաց ծարաւը ազատ եթերի, ուզեց իմանալ զադոնիքը կեանքի. նորա հոզու մէջ Բարի բառերը տենչանք

ծնեցին՝ յաւիտեան թողել մահուան անկողին, ու ցուպը ձեռքին խուզարկելու հիբով դուրս գալ փնտռելու մի կեանք երջանիկ:

«Սսա մեզ, ով Բար—ազերսում էր նա—պատմիք համարձակ. մեր սիրտը կարօտ սփոփիշ ձայնիդ՝ նորան առաջնորդ ուզում է ընտրնլ: Աշխարհը դադաղ՝ կեանքը դժնդակ նորանում պառկած դիակ կարծեցինք. աշխարհը մեծ բանո՛ կեանքը դարաւոր հեծող բանտարկեալ—մենք ճանաշեցինք: Կեանքերս շղթայ սև հեծեծանքի, անիւարատ սպոյ մեծ հանդէսների. վառ արեգակի ճառագայթները մեր սուզը ծաղրող, անմեղ լուսինը ու վեհ Երարշի պճնագարդ դէմքը՝ մեր կեանքը հեղնող մենք համարեցինք: Մենք մեր ընկերին երկնքի իշխան, դժոխքը սանձող, մեր խղճուկ, թշուառ կեանքին կարգադիր, ու տէր վեհագոյն ողջ տիեզերքին՝ ստրուկ ուղեղի ցաւագար տենչով յաւէտ կարգեցինք»:

Ու Բարը անխոնջ նոցա զոսացած ու մնանկ հոգում իւր աստուածեղին լոյսն էր ներշնչում: Տատամսոտ ամբոխն նորան սիրահար՝ ցանկացաւ ապրել նրանից անզատ և իւր սանձարձակ սուր յիշոցներով վեհ ինքնակալի, հզօր արքայի անարատ գահը արատաւորեց:

Հահի ծառաներն անվախ, անյօղգողդ՝ սուր նիդակներով ու կոշտ մտրակով ուղի են հարթում կեանքի հաճոյքը հազիւ ճաշակած անթիւ դիերի կոյտի վրայով: Արքան կատաղի վիշտի նման կայծակ էր տեղում իրան բերանից. «ամբոխ բթամիտ, անխելք մանուկի յիմար զաւեշտով կեանքը հեղնում ես. բայց

կերա փոխան քո օրդ խաւար ու կեանքդ դժոխք դու կը դարձնես»:

Եւ մանուկների անմեղ արինը ցօղեց ովազսի հրավառ կուրծքը. ալեհեր զանգերն ցցի զագաթին՝ պլշած աշքերով, ճոխ շրջապատի հողմն են կլանում. և գեռափթիթ պատանիների մանուկ շուրթերը երջանիկ կեանքի շարականով են յաւիտեան փակւում. ու բազուկները ջլոտ, վիթխարի երիտասարդի՝ ապագայ ազատ կեանքին ապաւէն՝ բըռնակալ սրի ահեղ հարուածից իսպառ ջախչախւած, գետին են փուլում, նորեկ սերնդին վրէժ կտակած: Եւ արցունքները արեան գետի հետ մեծ անապատի չոր դէմքն են ցօղում:

Ու անապատը վառ ծաղիկներով իրան հոլանի կուրծքն է զարդարում: Կեանքը սզապատ, կեանքը ծանը բեռ՝ ամբոխին դարձաւ վեհագոյն իդէալ. ու մահը հանգիստ, քունը մահաբեր՝ դարձաւ զզուելի մեծ անապատին: Նոր մանուկները դեռ օրօրցում, թոյլ բազուկները դէպի վեր ուզզած, մահին թշնամի՝ երջանիկ, ազատ ու անմահ կեանքն են կրծքերին փարում:

Կապոյտ երկինքը ուրախ քրքիցով հրճուանքի արցունք—կենսարեր ցօղ է երկրին ուղարկում. և անապատի չոր դէմքը կնճուտ՝ հողմին է փարում երկնի հետ հաշտուած:

Սրտերն հեծեծուն վսեմ մտքի հետ անքակտ ուխտ կոած, երջանիկ կեանքի ուղին են փնտռում. կեանքը վեհափառ՝ արինոտ մարտում մահը ջախչախած, իւր յաղթանակն է ցնծալով տօնում: Ծառներ

ու ծաղիկ, ժայռեր ու աւազ, մարդիկ ու գաղան  
մահը մոռացած՝ հոգեարք կեանքին ողի են տալիս:  
Հոգին սիզապանծ՝ սրտին ու մոքին անվեհեր  
միջնորդ՝ մարդոց աշքերում զորով է լցնում: Մար-  
դիկ տենչում են յաւիտեան ապրել...



Ժ.

Ծ Ա Ւ Ն Դ Ն Ե Բ Ք.

**Բ**ուրաւէտ, չքնաղ, անուշ եղեմի ագատ եթե-  
րով հարբած ամբոխը զոռ մարտիկների երկունքով  
բռնուեց. տոշոր ամլութեան միշտ բռնադատուած  
նոցա արգանգից աշխարհ ոլացան նորեկ ծնունդ-  
ներ: Բարի պատկերը նոցա կախարդիչ՝ յորդաբուղիս  
քարոզն ստահակ սրտին զեկավար դարձաւ: Սէզ  
ծնունդներից վեհն ու պաշտելին մի հրեշտակ էր  
ամբոխի առաջ. հին արևելեան գեղաշեայ կոյսը սև  
ստրկութեան քօղը պատռելով առաջ խիզախեց մեռած  
սրտերը ոտքի հանելու: Նորա գեղանի, անմեղ հայ-  
եացքից համարձակութեան նետեր են ցայտում.  
Նորա սեորակ, աշխոյժ աշքերից կախարդիչ սիրոյ  
ճառագայթները մանուկ սրտերում լապտեր են վա-  
ռում: Նորա կաթնաբոյր, կարմիր շուրթերից վաղոր-  
դեան ցողի կայլակ է ցայտում թառամ սրտերի շոր-  
ցած խորշերը: Ու նորա շունչը հրոյ թեներով պա-  
տանիների մեղկ հոգիներում անշէջ հնոցի բոց է յօ-  
րինում: Նորա ծեր հայրը—հզօր մուշտայիդ՝ վշտի  
ճանկերում յուսահատ հոգուն դափաղ է փնտռում,

ծանը նզովքի շանթեր տեղալով գեղանի կոյսի լուսափայլ ճակտին։ Բայց բռնակալի ահեղ դահճճի սոսկալի սուրը անմեղ երէի բարախուն կըծքին անհոգ շողալիս ոճը երկիւղից թափը չկորցրեց։ Ու անմեղ արիւնն աննման կոյսի մանուկ սրտերին բողոք էր կարգում։

Ու ծնունդները մոլի ամբոխի մեծ ովկիանոսի գոռ ալիքներից օրինակ առած՝ ուժգին գրոհով մարդոց բաժանման պարխսպն են քանդում։ Իսկ ծեր ամբոխը ձեռքը կարկառած, վեհափառ շահին աղերս է կարգում, հզօր բարկութեան կարկուտ շտեղալ սէզ ծնունդների մանուկ կիանքերին։

«Ո՞վ էր, ո՞վ Բարին բերեց անապատ—հարցնում է շահը կատաղի ձայնով—նա ընկեր ունէր, թէ մենակ եկաւ. ո՞վ հիւրընկալեց առաջին անգամ սատանի որդուն. Փնտոեցէք, գալք, շար ողիներին, նոցա ճակատին սոսկալի վճիռ ես դրօշմում եմ. Իժի ծնունդներ, պատիը յոյսերով ցանկացաք հեգնել ձեր հզօր տիրոջ երկնից կտակած անխորտակ ոյժը։ Հիք ձեղ փըրկութիւն. թէկուզ երկնքի ոլորապտոյտ աստիճանների անյայտ խորշերում պահուելու լինիք, թէկուզ ահոելի դժոխքի ծոցում ձեր թշուառ հոդին ապաստան փնտոի՝ չէք կարող փախչել ձեղի սահմանած մահաբեր պատժից՝ զի հըշտակներն կապոյտ երկնքի ու բիւր սատանայք ահեղ գեհենի լուռ սպասում են մեծ տիեզերքի անպարտ Արարշի ու նորաստուեր—հզօր արքայի հրամաններին. Դէհ, իմ ստրուկներ, վեհապանծ գահի թշուառ սողուններ, աշխարհը աւար՝ դուք աւարառու, աշխարհը պարտէզ՝ իսկ

դուք իշուկներ, ոտնատակ տուեք ու աւերեցէք, ինչ որ գին ունի շար ծնունդների խելառ աշքերում։ Ասէք, ով տեսաւ այդ նորեկ Բարին, կամ թէ որի մօտ»։

Փէրըաշբաշի.

Վեհափառ ալքա, ճիշտ երկու տարի սրանից առաջ, երբ շրջապատի մեծ կարաւանը թանկագին ակներ իւր վերայ բարձած արժանի եղաւ Զեր ոտքի հողը պագնելու պատուին—նորա հետ Բարը ովագիս մտաւ, ու իւր գալստեան առաջին օրից հզօր Արարշին հայնոյանք կարդաց. Բոլորը նորան անարդ կատակի նախատինքներով դուրս վանդեցին իրանց տան շէմքից և նա յուսահատ՝ ապաստան դտաւ մեծ մուշտայիդի վշրանքով իրան թշուառ գոյութիւնն հազիւ քարշ տւող մի հէզ ստրկի անշուք յարկի տակ։ Այդ թշուառ ստրուկը բոլորից ատուած, հեղնօրէն իրան «Մենաւոր» կոչած՝ նորա առաջին հիւրընկալն եղաւ։ Ի՞մ քաջ ֆէրքաշներ, նորան պիտ վնտուել, շարութեան թելի հսկայ կծիկը նորա մատին է այժմ փաթաթուած։

Մանկութիւնն ըղձերն յաւէտ մոռացած, գրսի շեշտերից իսպառ ձահճրացած՝ «Մենաւոր» ողին անձնատուր եղաւ մեծ անապատի մահուան բուրմունքին՝ երբ նորեկ Բարին հրաժեշտ տուեց. Այժմ անցաւոր աշխարհը մոռցած, անձնատուր եղած հանգերձեալ կեանքի պատիը հմայքին՝ բիրտ մոռացութեան մահուան անկողնում առանց փափազի մըափ էր փնտում։ Ու վերջին զիշերն, երբ կեանքն էլ մոռցած, մանուկ իղձերն էլ՝ հանգիստ նիշնում էր, յան-

կարծ խորտակուեց նորա սզապատ խրճիթի դուռը, ու փէրըաշները ուժգին գրոհով, մագիլը սըած բաղէի նման, նորա անկողնի վերայ սլացան, լպիրշ նախատինք, անէծք, հայհոյանք թափելով նորա քնամած գլխին: Խսկ նա անգիտակ մեծ իրաբանցին՝ ողբագին ձայնով նոցա հարցի ում էր. «Է՞ր էք նախատում, յանցանքս ինչ է. ոճիր կատարուեց—ես չեմ մասնակից. կամ են հրդիհել, մարդիկ սպանել, թէ կարաւանի ճամբայ են կտրել—ես մասն չունիմ...»:

*Մի ֆէրըաշ.*

Հազար երանի կլինէր բախտիդ, թէ դու կատարած լինէիր ոճիր մարդասպանութեան, կամ կարաւանի հարուստ աւարով քո սոված հոգուն յագեցում տայիր:

Բայց դու, սեամած հողի շարութեան, Աստուծոյ ահեղ վճոին հակառակ՝ դժոխքի ոգուն եղարդաշնակից. և ոգին դժխեմ առաջին անդամ մեծ անապատում քեզի այցելեց: Սուրբ օրէնքները ոտնատակ տուած՝ շարանենդ Բաբին դու եղար ընկեր:

*Մենատը.*

Ո՞վ է շար ողին. ո՞վ է շար Բաբը, կամ ինչ է արել Աստուծոյ ընդդէմ:

*Փէրըաշըաշի.*

Ստախո՞ս ստրուկ, դեռ ուրանում ես դու յանցանքներդ. դորանով միայն դժոխքի երկար ուղին ես կարճում...»:

2ար զինւորները անթիւ հարուածներ նորա անըզզայ զլիխին տեղալով, դէպի ծանակի փառաւոր հանդէս—ատեան են տանում:

Նա մտածում էր. «ով է այդ Բաբը, ու ինչ է արել, կամ թէ ես նորան ինչովէս եմ եղել թշուառ ձեռնածու»:



ստահակ քնել չէ ուզում: Լուռ անապատի մշտաղէտ լուսնի արծաթեայ լոյսին վշտերը պատմող չոր աւագներին արմունկը յենած՝ միայնակ Բաբը լուռ մըտածում էր. ու նորա միտքը լայն հօրիզոնի ծիրը շափելով, մշտահեծ սրտին դադար չէր տալիս:

Ընմեղ արիւնը ամբոխից հոսած, իբրև ոխերիմ դժոխքի հնոց, նորա ուղեղը անխնայ ճիզով յար տոշորում էր:

Վախճանը մօտ էր, նա պիտի մեռնի լայն անապատում իբրև աննշան մի վայրի ծաղիկ. իւր յիշատակը յաւէտ կը կորչի. պայքարն անսնունդ իսպառ կը հանգչի. և նորա հոգին անարդ մահապարտ՝ ահեղ ատենին մանուկ կեանքերի յորդահոս արեան կարմիր գետերից դատի կը կանչուի: Ընապատն ինչ էր և կամ ինքը ով, որ նրա չորցած, այլանդակ կըծքին բուրաւէտ այզի տնկել կարենար. մի խելառ հոգի՝ իւր սին տենչանքի յիմար կոչերով բիւր ոգիների իսպառ կորչելուն շար առիթ եղաւ: Դարերը կանցնին ու անապատը նորից կը գտնի իւր կորցրած նինջը, և զաւակները նորանում մեռաւած՝ սև նզովքների բազում նետերով Բաբի աճիւնը անհանգիստ կանեն, և փառքի փոխան՝ նզովուած հոգուն անշէջ գեհենը կը մնայ բաժին:

Բաբը յուսահատ, անարդ ոճիրի զզման արցունքով, անհոգ օրերի անյագ կարօտով չոր անապատը թողնել է ուզում. ինքը հէգ զինւար՝ զինուած շարքերում միայն կալող էր կոռւի զուրս ելնել. անզօր մի հոգի՝ լայն անապատում պայքար յօրինել նա պիկար էր: Ու անկարութեան խոր գիտակցութեամբ

## ԺԱ.

### ՀԱՆԴԻՊՈՒՄՆ.

Տիեզերքն անհուն լուռ մրափում էր. քնած էր երկիր և նորա նիրհը հանդարտ դիտում էր խորին բարձունքից իւր բիւր աչքերով, իբրև մի հսկայ ու լուռ պահապան, նրա խնամկոտ, գթառատ քոյքը: Քնած է երկիր և նրա որդոց լուռ հառաչները՝ ժայթքած վիրաւոր սրտի խորքերից, քնաբբու ճեմով մի յաւերժական վիշտ են յօրինում:

Սրտերը ստրուկ հէնց ծնուած օրից մինչև գերեզման ճամբայ ելնելը, մեղմիկ բաղխում են իրանց տմրակուռ վանդակի դուռը թոյլ հեծեծանքով: Ու բիւր սրտերի լուռ հառաչները միաւորուելով ու բեռուելով երկրի կըծքին, մի անքակտելի դաշինք են կոռւմ ու յօրինում են մի հսկայ թախիծ, որ իւր տնքոցով մեծ տիեզերքի քունն է խոռվում:

Եւ երկրին սփոփ անծիր երկինքը աշքերը շոած միշտ ցած նայելով՝ կաթնալոյս ճրազով նրա վէրքերն է յաւիտեան փնտուում, դարման տանելու իւր արշալուսեան ցօղէ արցունքով:

Բիւր բիւր սրտերի վշտաբեկ շաբքից մի սիրտ

իւր անոյժ հոգու անկումն էր ողբում:

Հուսնի մեզմ լոյսը ընտրած առաջնորդ՝ բիւր աւազներին յաճախ զասընկեր, նոցա ուղեցոյց այժմ դարձրած, ոտքերը բորբիկ, ճակատն արիւնոտ, մազերը ցրուած, տանջուած մարմինը զզզզուած լաթի պատուհաններից լուսնին ցոյց տալով, խուզարկու հերով դանդաղ գնում էր քունը մոռացած մի անյայտ էակ:

Ահա Բարին հեռուից տեսնում է նորան ու նորա մարմնով սարսուռ է անցնում—զաւաճան ամբոխն երկու օր առաջ իրեն պաշտելուն այժմ մատնել է, և փէրրաշների սրատես աշըը իւր հետքը զտաւ: Կորած է Բարը: Բայց... տարաժամի այդ ուղենորը իրան շուաքից կարծես վախում է. նենդ ֆէրրաշների տանչանքից փախած հալածական չէ: Ահա նա տեսաւ յուսահատ Բարին. կարծես ճանաչեց:

Ո՞վ էր ուղենորն, որ անփոյթ նենզով յուսահատ մարզու միակ սփոփիչ քունն էր խանզարում: Յուշիկ քայլերը զէպի նա ուղղեց, թախծոա աշքերով մօտեցաւ Բարին, ու նորա առաջ զլուխ խոնարհած, ոճրագործ դահճի զզման արցունքով հալածուած հոգուց զութ էր աղերսում:

«Խղճա ինձ, ընկեր. յանցապարտ հոգիս մահարեր քնից ահա արթնացած՝ ընկեր է ուզում. ահա իմ սիրտը ուրախ թրթոցով ուղի է փնտուում. օգնիր զու նորան, որ նա ճախրելիս յանկարծ դիպշելով կըծքիս վանդակին՝ առաջին փորձից շընկնի յուսահատ»:

Բարը սթափուած, վիրաւոր հոգով նորան ձայն

տուեց. «Ո՞վ ես ուղենոր, որ այդպէս անհոդ՝ զզման ժամերս բոնաբարում ես: Բիւր մանուկների անմեղ արիւնի կարմիր զետերը մըափած խղճիս նիրճը վրդոված: ինձ անապատից քշել են ուզում. անպարտ արիւնը քնած ամբոխի երակից հոսած՝ ահեղ Ռըարչին բոզոք է ուղղում, և հոգիս նորա բարկացայտ գէմքից իսպառ կործանուած, զագաղ է վինտուում. մոյլ տուր, միայնակ վերջին ժամերիս մեզապարտ հոգուս ներում խնդրելու»:

Ուրուական.

Խոլ զիշերային տանջանքիդ վկայ՝ մեծ անապատի ես Մենաւորն եմ. հոգիս նորոզուած՝ կայան է փընտուում. ես տանջանքներից նոր ոյժ ստացած, ամրակուռ բանտիս զուռը կոտըելով պահապահների շըլթան պատուցի ու զուրս վազեցի վեհապանծ Բարիդ տեսնելու յուսով: «Եզատութիւնը արիւն է ուզում: այդ զու ասացիր առաջին անգամ, երբ հանգիպեցանք. արիւնը հոսեց ու ազատութեան վեհափայլ ուղին ահա հարթուում է. այդ ուղու վերայ այժմ ես կանգնած, ոյժ եմ աղերսում.—վրկարար ձեռքդ զէպի ինձ ուղղիր:

Բար.

Ի՞նչ ես կամենում. մի բեկուած հոգի ինչով կարող է քեզ զարման անել:

Ուրուական.

Լսիր ինձ, ընկեր, ես եկայ քեզ մօտ հոգիս մատնելու: Հարբած եմ այսօր, և մի դժնդակ ներքին մը-

ղումով մատնել եմ ուզում ներքին աշխարհս։ Իմ սը-նանկ հոգին դատարկ տենչերով մի ողջ կեանք անցուց, և այդ անցեալով այսօր ես հարբած, ներքին աշխարհիս մատնիչն եմ զառնում։ Բիրտ տանչանք-ներս դարձան ինձ դայեակ, անարդ պատիժը դժոխ-քի ոգու, սրի հարուածը ու հալածանքը առապար հոգուս դարձան կենսաբեր ցողի կաթիլներ. և ոռո-գելով տոշորուած սիրտս, ցանած սերմերիդ սնունդ տուեցին. բայց հոգիս վախկոտ՝ զեռ երերում է։ Ճարունակ տենչով ես ապրում էի և այսօր նորից տենչանք եմ զգում. բայց իմ թոյլ հոգին առանց ուսուցչի կարծող է տենչից զործի անցնելու—ես չեմ հաւատում։ Հոգիս սնանկ է, եթէ կարող ես, սնունդ տուր նորան, անյագ մեռնում է։

Յուսահատ հոգին թախծապատ Բարի նոր ոյժ ըս-տացած յանկարծ սթափուեց. և անապատում դադաղ որոնող միայնակ Բարը նորից կազզուրուած ոտքի կանգնեցաւ. Ընմեղ արիւնը առանց արդիւնքի չէր հոսել առատ. մեծ հալածանքը մեծ ծնունդներ էր լոյս աշխարհ բերել. Միբար թեթեցած՝ ոտքի ելնելով նա Մենաւորի կրծքին փարուեցտւ. Լուսին ու եր-կինք, օդն ու անապատ վկայ կոչելով իրանց զաշին-քին, ասում էր նորան։

«Հարբած ես այսօր, մատնել ես ուզում, Ճատ լաւ մատնեցիր. Մինչ զու քո հոգին թանձը, սև քո-դով ծածկել ուզեցիր, ես այդ սևամած քօղի ծալ-յերից մի վառ արեգակ, մի ծիծ զուն զարուն, մի վարդ կարմրօրակ, մի նոր ու չքնաղ զարնան կարա-պետ ահա տեսնում եմ։

«Հարբած ես այսօր, մատնիչ ես դառնում. օհ, այդ հեգնանք է, ող չքնաղ հոգի։ Քո սնանկացած, սև զգեստ հագած, ճահճի մէջ խրուած, նորա գար-շահոտ, բորբոսնած տեսքից յաւէտ զարհուրած՝ կեն-դանի հոգին ահա աննկուն, ահա անսայթաք, հուժ-կու, վիթխարի, ճահիճն հարուածող՝ ես նկատում եմ։

«Հարբած ես այսօր, յուսահատ ես դու, ոյժ ես աղերսում. բայց աղերսանքդ անկեղծ ու աղնիւ՝ զիտես, մի ոյժ է—հզօր, փոթորկոտ, որ մեռած հո-գիս, թաղուած ըղձերս, սևամած սիրտս քնոյ դամբա-նից ահեղ որոտով ոտքի է հանում. Եւ ես զգում եմ՝ քեզնից անարդուած քո ներքին մարդը զիմումն է անում, ինձ աղերսում է քողոքի շանթեր ուղղել դէպի քեզ. որ դու անծանօթ ներքին աշխարհիդ, այդպէս անզգոյշ դատապարտութեան կնիք ես դնում նորա լուսաւոր, պայծառ ճակատին։

«Ես այդ զգում եմ, և պաշտպանում եմ. օհ, աղ-նիւ հոգի, զու չես ճանաշում ներքին աշխարհդ աւե-լի՝ քան ես, ես հաւատում եմ, ես համոզուած եմ որ այդ պարզ, մաքուր՝ սրտիդ հեղուկից փնջուած բառերը, այդ անուշ հոգուդ վեհ թթիւները, այդ հզօր շեշտի վառ կայլակներից հիւսուած փնջերը մեզնից ոչ հեռու—մօտ ատպագյում պիտի ամբանան, միշտ պիտի կոփուին, պիտի տառապեն, մինչև որ նրանց ծանր երկունքից յարութիւն առնէ նրանց հարազատ, նրանց սիրասուն, չքնաղ զաւակը—կենդանի գործը։ Համոզուած եղիք, աշխարհը սև է, բայց լոյսն հեռու չէ. նրան կը տեսնենք, նրան կը փարուենք։

«Մօտ եկ ինձ, ընկեր, առաջ ընթանաք—հոգիս

յառնում է։ Մանուկ ըղձերիս շիրիմի կողքին մինչ  
ես յուսահատ ողբ էի ասում, ահա քո ձայնից թար-  
շամած հոգիս նոր ոյժ ստացաւ. և անփոյթ կերպով  
մինչ ուղում էի սին անուրջներիս դադաղը ծեփել,  
նոր ողի առած՝ ահա զողզոջուն ձեռքերս պարզած  
ուղում հմքանդել նոցա շիրիմը. ջարդում հմ դադաղն  
ու նորա միջից ահա սիրապանծ յախուռն թա-  
փով, իբրև հրաբուղիս, վերև է ժայթքում մեռած ու  
թմրած մանուկ օրերիս սէդ անուրջների հսկայ զան-  
գուածը»։

Սուրբ եղբայրութեան անկեղծ համբոյրով Բաբն  
ու Մենաւորն լրւու անապատում դաշինք են կոռում.  
և երկրի թախծոտ. հազիւ տրոփող վիրաւոր սիրտը  
անփոյթ հրճուանքով վկայ է զառնում երկու սրտերի  
աւուր միացման. երկար գիշերին—վշտոտ, ձան-  
ձրալի՝ վառ տրշալոյսն է շուտով յաջորդում, և արե-  
ելքից հսկայ լապտերի անթիւ աշքերն են նոցա ող-  
ջունում։ Զոյգ հոգիները նոր կեանք ստացած՝ աւա-  
զը թողած ամբոխն են վինտուում և հրաժեշտի զերմ  
համբոյրներով նորա ուխտում են մինչև վերջ ապրել  
ամբոխի ծոցում ու ճշմարտութեան վեհ ուղին հար-  
թել. ապա դալ նորից միմեանց ողջոյնի։

Նորա զատուեցան ու նոցա անկեղծ, վերջին  
բաժանման յորդ արցունքներին երկինքը եղաւ սըր-  
տակից վկայ։



Փ Բ.

Մ Ե Ճ Ծ Ն Ո Ւ Ն Պ Հ Յ Լ.

Ա թին ու խաւար, ահեղ սոսկումի ծնող գի-  
շերը երկրազնդի հսկայ մարմինը իւր թանձը քուր-  
ձով իսպառ փաթաթեց. և քունը զթոտ իւր որդի-  
ներին սոսկման ճանկերից ուժով զուրս կորգած՝  
մայրական շնչով օրօր է կարդում նոցա ականջին։  
Ամեն կենդանի որչի մէջ մտած իւր զոյութինը մոռ-  
նալ է ուզում։ երկիրը քնած՝ երկինքը նորան յա-  
ւէտ դաշնակից՝ իրան սփոփիչ քուն է որոնում։ Լու-  
սին ու աստղեր երկրի սոսկումից յանկարծ վարակ-  
ւած ահաբեկ փութով՝ հսկայ ամպերի անթափանց  
քողը իրանց քնամած զէմքին են փուռմ։ երկինքը  
մթին, երկիրը խաւար, օդը նոցա մէջ լուակեաց սրդ-  
ւոր՝ ծածկամիտ նենգով միմեանց դաւում են։

Լուռ գիշերային սոսկման սքեմով հոգին փա-  
թաթած, առանց տեսնելու, առանց լսելու՝ յողղողղ  
քայլերով առաջ էր գնում մի հէդ ուրուական։ Մե-  
նաւորն էր նա չոր անապատի, որ Բաբի խօսքից  
նոր կեանք ստացած, մոռացած հանգիստ ու նինջը  
անուշ՝ մեծ անապատի խորշերն էր չափել և յոխոր-

դաշտած իւր ժպտուն բախտով, ուզում էր տեսնել նորից ուսուցչին, պատմել յաղթանակն վեհ գաղափարի, նորան նոր ոյժ տալ, նոր ոգի առնել, ապա իւր փշոտ ուղին դուրս ենել:

Ոչ սոսկումները և ոչ զիշերը — խաւար ու մթին նորա քայլերը շեն յապաղեցնում. ու միտքը արթուն թոշում է հեռուն չքնաղ վայրկենի վառ երազներով. — ահա և Բաբը ժպիտը աչքին, հոգին լցուած է իւր յաղթանակի վեհ գիտակցութեան բուռն հրճուանքով: Նա իւր ձեռքերը առաջ մեկներով ուզում է զրկել սէկ Մենաւորին և ընկերական սուրբ համբոյրների դրօշմը զնել նորա ճակատին. և Մենաւորի այրուած ճակատը երջանկանում է նորա համբոյրից: Միայնակ ոգին քայլերը արագ, շնչարգել թափով առաջ է վազում իւր Բաբի զիրկը ընկնելու տեհնչով:

Բացուեց արշալոյս: Մթին զիշերը իւր սոսկումների ահեղ բանակով ոսկէ լապտերի վայլից զարհուրած, յետ է նահանջում դէսի արևմուտք: Եւ արշալոյսին կարծես կարապետ՝ յոզնած Մենաւորն ովազիս մտաւ:

Լայն անտապատի նիրհը այս անգամ յանկարծ խանգարուեց շեփորի ձայնից. ու բնիկները մեղկ ովազիսի քուները կիսատ՝ զէպ դուրս են վազում դիտելու շահի սարքած հանդէսը: Բիւր գլուխների հոծ բազմութիւնը՝ կռուիցը յոզնած մեծ ծովի հանդարտ ալիքների պէս, մեղմ տատանում է: Մենաւորն ոտքից ոյժ է թախանձում: — Այն ինչ պատկեր է հեռուից նշմարում և ով է կանգնած ամբոխի միջում: Ահ, Բաբն է, իմ Բաբը. քարոզ է խօ-

նում՝ և նըքան ունի արդէն հետևող — լուռ մրմնջում՝ է Մենաւոր ոգին ու արագութեամբ առաջ ընթանում: Հասաւ ամբոխին: Բայց շրթունքները կարծես ամբոխի լուռ փսփսում են: «Այդ ինչ էք ասում». Նա հարց է տալիս: Ամբոխից մի մարդ դառնում է նորան և թախծոտ շեշտով ասում ականջին. «Տես, Բաբն է այնտեղ, նա վերջին անգամ այս խօսքերն ասաց». «Լոյսը տենչանք է ծնում մեր հոգում. տենչը հալածանք մեզ համար ունի, և հալածանքը մայր է բազմածին վեհ հոգիների»: Բաբը, իմ Բաբը, միթէ այդ ճիշտ է — ասաց մենաւորն ու առաջ վազեց կարօտից այրուած շրթունքն հպելու նորա ճակատին....:

Բայց... ով զինզակ, տեսիլ սոսկալի... այնտեղ կանգնած էր անգութ զահինը Բաբի արիւնու գլուխը ձեռին: Ամբոխը ցրուեց դառնացած սրտով:

Եւ Մենաւորը գլխակոր, յուզուած՝ կուրծքն է ծեծում թանկազին Բաբի զիի մօտ կանգնած: Զզման արցունք չէր և ոչ յուսահատ սրտի փղձկանքը — վրէժի կայլակ և երդման ցօղ էր նորա աչքերից զետին գլորում: Ու նա հեռացաւ աշխարհին տալու իւր Բաբի վերջին կտակը անմահ:

---

Անցան շատ օրեր Բաբի գլխատման սպապատօրից, մեռաւ յաւիտեան ահեղ հալածանքն, բայց ծնունդները նորա սիդապանծ բազմացան շուտով և ահա իրանց վիհ յաղթանակն են տօնում պարծան-

քով. Ովազիսի մէջ կահաչով պատած մինչև այսօր  
էլ թումբ է երևում. Դալար խոտերը ու վառ ծաղիկ-  
ներ մեզմիկ շոյելով համբոյր են տալիս որբազան  
շիրմին՝ լուռ փսփսալով նորա տակ պառկած Բաբի  
ականջին նորա քարոզի յոխորդ ընթացքը:

Եւ անապատի նոր սերունդները երկիւղած զէմ-  
քով շիրմի առաջ ցած են խոնարհում իրանց զլու-  
խը. և երախտապարտ սրտի խորքելից օքնաբանում  
են նահատակ Բաբի սուրբ յիշատակը:

Եւ յիշատակը նահատակ Բաբի ամբոխի սրտում  
կենդանի պահեց մեզկ ովազիսի հէզ Մենաւորի հա-  
լածուած հոգին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0350374

42480

## ԼՈՅԱ ԵՎ ՏԵՍԵԼ

1) ԿՈՅՔ ԲԱՐԵՒՆ, քերթուած (սակաւաթիւ)	10 կ.
2) ԵՐԱԽԵՑԻՔ, պատմուածք . . . . .	10 կ.
3) ՀԱԼԱԹԱՆՔԻ ԾՆՈՒԻՆՔԻ, քերթուած . . . . .	20 կ.

## ԳԵՏԶՐԵՏՏԵ ԼՈՅԱ ԿՏԵՍՈՆԵՆ

- 1) ԲԼԵՋԱՆ պօկմա 3 երգով.
- 2) ԱՐՉԱԿ ԲԱՆԱԱՏԵՂԵՐԻԹԻՐԵՆԵՐ.
3. ԿԵԱՆՔԻ ԶԱՐԿԵՐԱԿԱՆԵՐԻ. վէսլ (հատ. ա. աշակերտական պայքարիներ).

ԳԻՆՆ է 20 դրամ.

Դիմել, Баку, Торговая ул., фотография Мечи-  
кина, Маркарү Аветисянъ.